Ուն.
Ս-50

Աիմ. Զուզ [illegible]

# ԳԻՐՔ
# ՏՐԱՄԱԲԱՆՈՒ
ԹԵԱՆ.

Արժօնի Յ ուղղայեցւոյ
Գերիմաստ Սրբազանի
Րաբունեալ:

Եւ Տպեցեալ ի Հայրա
պետութեան տեառն Էջմիած
նի Ք. եյթունցի Տեառն
Սրբոց Արքին Կաթողիկոսի
Ամենայն Հայոց.

Ի Կոստանդնուպօլիս քաղաքի

Հրամանաւ Նորին պատ
րիարքի Տեառն Յօհան
նիսի Սուրբ Նախկոնսիւ և
Սրբազան Արքեպի.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Սկիզբն Գ. ուղղայեցոյց Յովհաննու
Արիստոտէլի՝ Նորարեալ Համառօտան
Տրամաբանութեան։



# ՍԿԻԶԲՆ

Տրամաբանութեան՝ պարտէ փոքր ինչ ասել ըղ հարցմանէն. զոր սահմանէ Արիստոտէլ այսպէս. Հարցումն է խնդիր պատասխանւոյ։

Եւ թէպէտ բազում են տեսակք հարցման, սակայն պիտոյանան մեզ այժմ՝ զինչէն և որպիսի ինչէն. որք ասին զայնցանէ, որոց գոլն խոստովանելէ։ Ոմանք ՚ի հարցանելն՝

զի՞նչ է, կամ որպիսի ինչ է, յայտ
առնէ թէ գիտեմ զգոյն, բայց ոչ
գիտեմ թէ զի՞նչ է կամ որպիսի ինչ է
Իսկ զանազանին այսոքիկ ՚ի միմեանց·
քանզի՝ զինչէն հարցանէ զամենևին
ոչ գիտացեալն· իսկ որպիսի ինչէն՝
հարցանէ զզանազանութիս գիտացլ
իրին· Որ օրինակ՝ թէ հարցանէ՝
ոք, զի՞նչ է ՚ի մախաղիդ· պատասխանի,
մի՞րդ՝ կամ խնձոր· որոց գոյ զանա
զանութի, բայց չև ևս է յայտ։ Իսկ
՚ի հարցանելն թէ՝ որպիսի ինչ մի՞րդ
իցէ, պատ՛՛, այսպիսի ինչ միրդ· այս
ինքն նուռն· կամ այլ ինչ միրդ·
Իսկ ՚ի հարցանելն՝ որպիսի ինչ խըն
ծոր· պատ՛՛, պահունի· կամ այլ ազգ։
Իսկ արդ՝ յուսման դիալեկտիկէին՝
այսինքն տրամաբանութեան՝ երեք երևին
մասունք· Պարզաւութի, Շարա
մանութիւն, Շարաբանութիւն·
Պարզաւութի է պարզ ձայնն· որ գոն՝
մարդ· ձի· յաղթէ· ընթանայ։
Շարամանութի է զտրոհելն ստորո
3 գել զընթակայեն· որ գոն՝ մարդ

յաղթէ · ձի ընթանայ։ Բայց է՝ զի
ենթակայն է անունն, իսկ ստորոգեալն
բայ · որպէս մարդն և ձին՝ որք են ան
ուանք՝ եղեն ենթակայք · Իսկ յաղ
թէն և ընթանայն՝ որք են բայք՝ ե-
ղեն ստորոգեալք · Այլ է՝ զի ենթա
կայն և ստորոգեալն են անուանք ·
որպէս՝ մարդն բանական է · ձին սըմ
բակաւոր է · Այս մարդն և ձին որք
են անուանք՝ են ենթակայք · և բանա
կանն և սմբակաւորն ևս են անուանք,
բայց են ստորոգեալք · Իսկ զՏրա
մաբանութիւն՝ նաև զկատարեալ տեսութիւն
Տրամաբանութեան՝ յետոյ տեսցուք ·
այլ այժմ ասելի է զՊարզաւորութիւնն ·

Յաղագս Պարզաւորութեան · Ակ
Հատոր Առաջին ·



ՄԵՆԱՅՆ ՊԱՐԶ ·
ձայն՝ կամ ընդհանուր է,
կամ մասնաւոր · ընդ-
հանուր՝ որպէս մարդ · մասնաւոր՝ որպէս
սոկրատէս։ Բայց մասնաւորն միշտ է,
4 որ ասի անհատ · իսկ ընդհանուրն

զանազանէ։ Քանզի է որ առաւել ընդհանուրէ. որպէս կենդանին. որ ասի Սեռ. և է որ նուազէ քան զսեռն. որպէս երկոտանին. որ ասի Տարբերութի. և է որ նուազէ քան զտարբերութիւն. որպէս մարդն. որ ասի Տեսակ. ընդ այսմ է և ծիծաղականն. որ ասի Յատուկ. Ուստի հարկաւոր է գիտել զհինգե սինս զայսոսիկ. այսինքն՝ զՍեռն, զՏարբերութիւնն, զՏեսակն, ըզ Յատուկն, և զՊատահումն.

## Յաղագս Սեռի։

Սեռ անուանս իմն ըղց առնանի քանզի անուանք այսպիսիք, յոյն, հայ, արշակունի, որք են՚ի նախնեց, ասին սեռք. և անուանք այսպիսիք, կիսեան. յօնաննեան. որք են ՚ի ծնողաց, ասին սեռք. նաև անուանք որք զտեղիս նշանակեն՝ ասին սեռք. որպէս տարսոնացի. կղայեցի. փանցի, և այլք. Իսկ մեր բանս ոչ է վասն այսպիսեաց. այլ վասն այնոցիկ որք զտեսակս պարունակեն. որք են այսպիսիք. կենդանի. զգայուն. գոյն. թիւ. և այլք.

զայսպիսի սեռս ենթադրեն այսպ․
Սեռ է՝ որ ստորոգի՛ ՚ի զինչէութեան շատեսակաց
ոմանց· որպէս անձնաւոր։ Որդ՝ ասե
լոյն ՚ի զինչէութեան ստորոգի՛, զանազանէ
զսեռն ՚ի տարբերութէ և ՚ի հասարակ
պատահմանէ ․ որք յորպիսի ինչէութեան
ստորոգին․ քանզի ՚ի հարցանելն թէ՝
զի՞նչ է մարդն, ասեմք՝ անձնաւոր․
և նմանապ ՚ի հարցանելն թէ՝ զի՞նչ է
ագռաւն, ասեմք, թէ՝ անձնաւոր․
Իսկ յորժամ վասն մարդոյն հարցա
նիցիմք թէ որպիսի անձնաւորէ, ա
սեմք՝ երկոտանի․ որէ տարբերութի․
Նաև յորժամ վն ագռաւուն հարցա
նիցիմք թէ որպիսի անձնաւորէ, ա
սեմք թէ՝ սեաւ․ որէ պատահումն․
Քանզի ՚ի հարցանելն թէ՝ զի՞նչ է
անձնաւորն, ոչ զզանազանութիս անձ
նաւորին կամիմք գիտել, այլ զնոյն
ինքն զանձնաւորն կամիմք իմանալ։
Իսկ ՚ի հարցանելն թէ՝ որպիսի ինչ
անձնաւոր է, ոչ զանձնաւորն կա
միմք գիտել, այլ զզանազանութիս
6 անձնաւորին կամիմք իմանալ։

Ապա թէ գիտելով զինչ անձնաւորն իցէ, բայց յոլովք են անձնաւորք և զանազանք, կամիմք տարբերելով իմանալ թէ որ անձնաւորն իցէ։

Այս ահա յայտ եղև. զի ասելով թէ սեռն 'ի զինչէութեան ստորոգի, որոշէ զսեռն 'ի տարբերութենէ և 'ի պատահմանէ։ Իսկ ասելով թէ՝ ըստ տեսակաց ստորոգի, որոշէ զսեռն 'ի տեսակէ 'ի յատկէ՝ և յանհատէ։ քանզի տեսակն զանհատից ստորոգի և ոչ զտեսակաց։ զոր օրինակ՝ մարդն տեսակ գոլով՝ զսոկրատայ և զպղատոնէ ստորոգի. որք են անհատք և ոչ տեսակք։ Այս յատուկն զտեսակէ և զանհատից ստորոգի. և ոչ զտեսակաց. որպէս ծիծաղականն զմարդոյ միայն ստորոգի. և զպղատոնէ և զսոկրատայ։ Իսկ սոկրատէս որէ՝ անհատ՝ զանձնէ սոկրատայ միայն ստորոգի։ Ապա ուրեմն ասելով թէ՝ սեռն 'ի զինչէութեան ստորոգի, տարբերէ զսեռն 'ի տարբերութենէ և 'ի հասարակ պատահմանէ։ զի թէպէտ

7 տարբերութիւն և հասարակ պատահ

մասնքն զտեսակաց ստորոգելին, որպէս երկոտանին և սեռական զտեսակաց ասին, սակայն յորպիսի ինչէութեան ստորոգին և ոչ ՚ի զինչէութեան. Իսկ ասելոցն՝ ընտանեաց ստորոգելի, զանազանէ ըզ սեռն ՚ի տեսակէ ՚ի յատկէ և յանհատէ.

## Յաղագս Տեսակի.

Տեսակ՝ սեռի՛ է տեսակ. և սեռ՝ տեսակաց է սեռ. վասն առանց միմեանց ոչ բացայայտին. Բայց է՛ սեռ՝ որ միշտ է սեռ. որ ասի՛ սեռականագոյն սեռ. և է՛ տեսակ որ միշտ է տեսակ. որ ասի տեսակագոյն տեսակ. և է՛ զի սեռն տեսակ լինի և տեսակն սեռ. Այս յայտնին այսուքիկ ՚ի նկարեալ ձևոյս.

| | | |
|---|---|---|
| մարմին. | Գոյացութիւն. | անմարմին. |
| [illegible] | Մարմին. | [illegible] |
| անձնաւոր. | Կենդանի. | անանձն. |
| շնչաւոր. | Անձնաւոր. | անշունչ. |
| բանական | Շնչաւոր. | անբան. |
| Պետրոս. | Բանական. | Պօղոս. |

Այս քերդ՝ ած գոյացութիւն է սեռականագոյն սեռ. և մարդն տեսակա

գոյն տեսակ. իսկ միջինքն են սեռք
և տեսակք. քանզի նոյնն լինի սեռ
և տեսակ. բայց առ այլ և առ այլ
վերաբերութբ. Քանզի մարմինն է
տեսակ գոյացութ՟ և սեռ կենդանոյ.
և կենդանին է տեսակ մարմնոյ՝ և
սեռ անձնաւորին. և անձնաւորն է
տեսակ կենդանոյ՝ և սեռ շնչաւորին.
և շնչաւորն է տեսակ անձնաւորին՝
և սեռ բանականին. իսկ բանականն է
յատուկ մարդոյն. որ է տեսակագոյն
տեսակ. վ՟յ ոչ ևս կարէ գոլ սեռ.
Եւ բան տեսակին կրկին է. մինն է
հասարակ ըստ տեսակաց, և միւսն
յատկագոյն տեսակին միայն է.
Հասարակ, որգոն, Տեսակ է ընդառմոյ
ստորոգելոյն. զորմէ սեռն ստորոգի.
Քանզի տեսակագոյն տեսակն՝ և
որք սեռ ևս կարեն գոլ՝ ըզբազմաց
ստորոգին. և զիւրաքանչիւր տեսա
կէ՝ սեռ իմն ստորոգի. Իսկ բան տե
սակագոյն տեսակին է, ստորոգութիւն
շնորհէ. որոյ մասունքն են ընդհանրականք.
9 որգոն, մարդ. Քանզի սեռ և

տարբերութի և յատուկ՝ թէպէտ են
ստ̃րգութիք, այլ ո՛չ զբոլորէ իմեքէ.
այլ մասն բոլորի իմիք. Օ՝ի գոյա
ցութի ըստ այնմ ստորոգի զմարդոյ՝
զի է ըստ ինքեան գոյացութի և ո՛չ ըստ
պատահման. Նմանապ̃ ըստայնմ ասի
զգայուն, զի զգայ. և ըստայնմ ասի
երկոտանի, զի ունի երկուս ոտս.
և ըմ̃ ասի ծիծաղական՝ զի ծիծաղի.
Լհա՛ այսոքիկ՝ են մասունք մարդոյն
և ո՛չ բոլորն. Իսկ մարդն զհամահա
ւաքմանէ մասանց ամենեցունց ստո
րոգի, և ոչ զմասնէ իմեքէ. վ̃ա ասի
զբոլորէ՝ ստորոգութիւն.

Իսկ այն որ ասէ, որոյ մասունքն են ընդ
հանրականք, զանազանէ զտեսակն յան
հատէ. զի սոկրատէս թէպէտ բոլոր
իմնէ, սակայն մասունքն՝ այս՛՛ հոգին
գլուխն և ոտքն և այլքն՝ ո՛չ են ընդ
հանրականք. ո՛պ կենդանին կամ ծի
ծաղականն. այլ են բնականք. ջ̃ զի
գլուխն և ոտքն և այլ մասունքն սոկ
րատայ՝ ո՛չ ստորոգին զսոկրատայ.
10 Իսկ երկոտանին և այլք այսպիսիք

որք են տարբերութիւնք ուրուամն բո
լորին են ընդհանրականք։

Պարձեալ սահմանի տեսակագոյն
տեսակն այսպէս։ Տեսակ է գոյութիւն անհա
տելի, զանազանեալ գոյացական տարբերութե
Ա՛րդ՝ ասելով՝ գոյութիւն անհատելի,
զանազանէ զնա 'ի սեռէ՝ 'ի տարբերութե
'ի յատկէ՝ և յայնց տեսակաց՝ որք սեռ
և ս կարեն գոլ։ Քանզի սեռ հաղոր
դի տարբերութէ և առնէ այլ տեսկ·
ոպ երկոտանին և բանականն որք են
տարբերութիւնք՝ առ միմեանս գոլով՝
նշանակեն զմարդն։ Նմանապէս ծիծա
ղականն առադրեալ զգայնոյն՝ նշա
նակէ մարդն։ այսպէս և սմ միջին տե
սակքն մի առ մի առադրեալ ենթա
կայացուցանեն այլ և այլ տեսակս։
Իսկ տեսակագոյն տեսակն ոչինչ
հաղորդի. որպ առ մարդն ոչ կարէ
յաւելուլ գոյացական ինչ իբրթէ
առնիցէ այլ տեսակ։ Իսկ ասելով,
զանազանեալ գոյացական տարբերութե, զանա
զանէ զտեսակն յանհատէ. զի թէպտ
II անհատն ևս է անհաղորդելի գոյա

ցուն, այլ ո՛չ է զանազանեալ գոյացական տարբերութեամբք· այլ պատճենօք· զոր յայտնելոց եմք յիւրում տեղւոջն· Բայց գիտելի՛ է, զի տեսակ ասի և՛ի վե՛ր իւրաքանչիւր կերպի անհատից·

## Յաղագս Տարբերութեան·

Տարբերութիւն է՝ որով բաժանի և ենթագրի իւրաքանչիւր իր· Արդ՝ այս բան՝ հասարակ է գոյացական և պատահական տարբերութեանց· քանզի թէ գոյացութիւն և թէ պատահումն, թէ յինքեանս զանազանին, ասի բաժանումն· և թէ ինքեանք յայլոց տարբերին՝ ասի ենթագրութիւն· Այլ թէ ենթագրութիւն և ասիցի բաժանումն, ո՛չ է անտեղի· զի որ ենթագրութեամբ տարբերի՛ յայլոց, յայտ է թէ անջատի՛ յայլոց· բայց ո՛չ անդրադարձեալ· զի ո՛չ ամենայն բաժանումն է ենթագրութիւն· զոր օրինակ՝ զանձնաւորս բաժնելով ՚ի շնչաւորս և յանշունչս, ո՛չ լինի ստորագրութիւն· այլ՝ անջատումն միայն· Այս արդ՝ բաժնի տարբերութիւն
12 ՚ի գոյացականն և ՚ի պատահականն·

Գոյացականն է՝ որ առնէ ա՛յլ. ո՛չ երկ
ոտանին և բանկ̃նն առնեն զմարդն.
որ է այլ իմն տեսակ ՚ի տեսակս.
Իսկ պտհկ՛նն է՝ որ առնէ այլայլակ,
և ո՛չ այլ. ո̃չ խաժակն՝ և պնչատն՝
առնեն զբաքգէն այլայլակ առ ա՛յլ
մարդիկ. քանզի այսպիսի տարբերու
Թիւք ո՛չ կարեն այլ իմն տե̃կ առնել.
այլ միայն զանհտսն այլայլէն և որո
շեն ՚ի միմեանց. վ̃յ կոչին այլայլակք.
Բայց՝ են այլայլակք ոմանք որք զտե
սակս տարբերեն. և կոչին հասարակ
պատահմունք. զի զտեսակաց ստորո
գին. որ̃պ սեա̂ն զագռաւէ ստորո
գեալ՝ տարբերէ զնա ՚ի բազում հա
̂ւուց, և զեթենոսէ ստ̃րգեալ՝ զանա
զանէ յայլ փայտից. Սակայն սեա̂
գոյն ագռաւու՝ ո՛չ է այնպէս որ̃պս
երկոտանի գոյն. քանզի երկաքեացն
յարառոցի ՚ի զինչէութ̃ն զագռաւէ
ստորոգուե. քանզի ՚ի հարցանելն,
զինչ է ագռաւն, ասեմք, հաւ. յո
րում յաքառոցեալ գոյ երկոտանին.
13 իսկ սեա̂ն ոչ. Իբ̂ Թ̃պտ յասելն

ագռաւն՝ յարառոցի՛ սեաւն , սակայն
կարեմք զմտաւ ածել զագռաւն ա-
ռանց սեւութե ոչինչ պակասեալ 'ի
գոյացական մասանցն ։ Իսկ առանց
երկոտանութե՝ անկարէ իմանալ զնա
անպակաս 'ի գոյացական մասանց ։
Վն այսորիկ թէ հասարակ պատահ-
մունքն որք զտեսակաց ստորոգին,
և թէ յատուկքն որք զանհատից
ստորոգին՝ կոչին այլայլակք ։
Իսկ յատկեղքն որք են գոյացականք,
ոպ երկոտանին և հետևակն, կոչին
այլարարք և տեսակարարք ։ և ըստին
քեանք ։ և անանջտկան տարբերւթք ։
Բայց՝ 'իպատահական տարբերութիւն
և ս գոն անանջատական տարբերու-
թիք ։ ոպ սեւութիւն ագռաւու , և
խաժակնութիւն պօղոսի ։ և այլք այսպի-
սիք ։ որք յընթադրութե ընթակայից
իւրենց յարառոցին ։ զի յընթադրու-
թեն ագռաւու՝ կարեմք ասել սեւն ։
և յընթդրութեն պօղոսի դնի խաժակն
Իսկ անջատական տարբերութիքն՝
14 յընթադրութե ոչ դնին ։ զի են

յար 'ի հոսման. որպէս տղայ գոլն՝ և այր. արթուն գոլն՝ և քուն.

Բայց ենթակայք սոցա՝ տարբերին սոքօք կամ ինքեանք առ ինքեանս, կամ ինքեանք առ այլս. Ինքն առ ինքն՝ որգոն, պետրոս յանցեալսդ երիտասարդ էր, այժմ ալևոր է. երէկ գործէր, այսօր դատարկ է. Իսկ ինքն առ այլս, որգոն, պետրոս տղայ է, պօղոս այրացեալ է. պետրոս նինջէ, պօղոս արթուն կայ. Եւ յայսցանէ յայտնէ թէ եռակի է տարբերութին.

Ոմն է գոյացական և անանջատական.

Ոմն է պատահական և անանջատական.

և Ոմն է պատահական և անջատական.

Բայց քանզի նոյնն լինի սեռ, և տեսակ և տարբերութի. ուստի պարտէ գիտել թէ ուրանօրէ սեռ, և ուրանօր տեսակ, և ուրանօր տարբերութիւն.

### Յաղագս թէ ուրանօր է սեռ.

Որ 'ի բանում առաւել պարունակօղ է՝ սեռ է. որգոն, մարդն է՝ անձնաւոր՝ շնչաւոր՝ երկոտանի՝ բա
15 նական. ահա ստանօր 'ի բանի

ւ մարդոյ՝ անձնաւորն առաւել պա
րունակօղ է քան զշնչաւորն և զպյս.
վ̃յ է սեռ։ Որպէս, որ բաժանի ՚ի տե
սակս՝ է սեռ. որկէն, անձնաւորն
որոշի ՚ի շնչաւորս և յանշունչս .
ահա անձնաւորն անջատեցաւ ՚ի տե
սակս. վ̃յ է սեռ։ Որպէս, որ զտեսա
կաց ՚ի զինչէութիւն ստորոգի, է սեռ.
որպակ, զի՛նչ է մարդն, անձնաւոր.
Ահա անձնաւորն է սեռ .

Յաղագս Բէ ստորանօրէ տեսակի.

Որ ենթագրի՝ տեսակ է. որպան,
անձնաւորն է գոյացութ՝ մարմին՝
զգայուն։ ահա անձնաւորն ենթա
գրեցաւ. վ̃յ է տեսակ։ Որպէս, որ Ը
հանուրէ և ենթակայի՛ սեռի Ը ստո
րոգման՝ է տսկ. որգոն, անձնաւորն
է կենդանի։ ահա անձնաւորն ենթա
կայացաւ կենդանոյն. վ̃յ է տեսակ.

Յաղագս Բէ ստորանօրէ տարբերութեն.

Որ յենթագրութ նման պարունա
կէ՝ և ոչ է ենթագրեալն՝ է տար
բերութ. որգոն, թռչունն է մարմին
16 անձնաւոր. ահա անձնաւորն է

2 Նմազ պարունակող է զմարմինն. վասն է տարբերութիւն. և թևաւորն և ս է Նմազ պարունակող. վասն և նա և ս է տարբերութիւն. Ասացեալք որոշեն զսեռն՝ են տարբերութիւնք. որգոն կենդանին որոշի՛ յանձնաւորն և յանանձն. այս անձնաւորն և անանձն բաժանեցին զկենդանին. վասն են տարբերութիւնք. Բայց՝ թէ աստանօր անձնաւորն և անանձն տեսակք կոչեցին, ոչ է անտեղի. քանզի տեսակք ևս որոշեն զսեռն. սակայն ըստ ընտանութեան՝ տարբերութեան է կատարել զսեռն. Աւստի ենթագրեն զտարբերութիւն այսպէս. **Տարբերութիւն է՝ որով յաւելու սեռն 'ի տեսակն.** Դարձեալ ենթագրեն այսպէս. **Տարբերութիւն է՝ որ ստորոգի զտեսակաց զանազանելոց յորում ինչ է հարցանի.** Որգ՝ ասելով, զտեսակաց, որոշէ զտարբերութիւն 'ի յատկէ և յանհատէ. զի յատուկն զտեսակէ և զանհատից ստորոգի. և ոչ զտեսակաց. Ասելով, զոյացութեան, զանազանէ 'ի հասարակ պատահմանէ. զի թէպէտ հասարակ պա

տահմունքն ստորոգին ըզտեսակաց
յորպիսի ինչէութեան, այլ ո՛չ գոյցէր·
Իսկ ասելով, յորպիսի ինչէութեան, որոշէ՛
՚ի սեռէ և՚ի տանկէ· քանզի այսոքիկ
՚ի զինչէութեան ստորոգին· զի յասելն՝
զինչ է սոկրատէս, ասեմք թէ՛ մարդ՝
և յոլն՝ զինչ է մարդ, ասմք զգայուն·

## Յաղագս Յատկի·

Յատուկն զանազանաբա՛ր գոյ·
քանզի է որ բոլոր տեսակին ամի
գոյ, բայց ո՛չ միայնոյ· որպէս մարդոյ
երկոտանի գոլն· քանզի թռչնոց բա
զումք են երկոքեցք· Իսկ է որ միոյ
տեսակի միա՛յնէ, բայց ո՛չ ամի· որպէս
մարդոյ քերթօղ գոլն· Իսկ է որ մի
այնո՛յէ և ամի· բայց ո՛չ միշտ· որպէս մար
դոյ ալևոր գոլն· Իսկ է որ միայնոյէ
և ամի և միշտ· որպէս մարդոյ ծիծաղա
կան գոլն· ահա՛ քառակի՛ եղև յա
տուկն· Բայց՝ըստ չորրորդ եղանա
կի յատուկն հակադարձի ընդ տե
սակին· որգոն, ձին է խրխնջական·
խրխնջականն է ձի· կենդանին է անըն
18 դական· անընդականն է կենդանի·

անձնաւորն է զգայուն. զգայունն է
անձնաւոր։ Արդ տես, զի երկաքնցն՝
ըստ այնմ զի բաժանի ՚ի տեսակս՝ է
սեռ։ Եւ ըստ այնմ զի տարբերէ զերկ
ոտանին՝ է տարբերութի։ Եւ ըստ այնմ
զի երկաքեաց գոլն յատուկ է երկո
տանեացն՝ է յատուկ։ Եւ յորժամ են
թագրի՝ է տեսակ։ Բայց՝ թէ սեռն
ուրանօր է սեռ՝ կոչեցի տարբերութի՝
ոչ է անդէպ՝ քանզի յենթագրութն
դնի սեռն՝ զի տարբերիցէ զենթա
գրեալն։ Նմանապէս եւ յատուկն եւ տե
սակն եթէ կոչեցին տարբերութիք՝
ոչ է անտեղի. քանզի յասելն՝ բանա
կան, կամ մարդ, տարբերի մարդ տե
սակն յայլ տեսակաց. Արդ թէպէտ
ըստ իւրն իմիք կարեն կոչիլ անուամբ
իրերաց, սակայն են զանազանեալք
՚ի միմեանց սեռ եւ տարբերութի եւ
տեսակ եւ յատուկ. որպէս յայտ է ՚ի տե
ղեաց իւրեանց թէ ուրանօր սեռն է
սեռ. Նմանապէս եւ այլքն։ Արդ մանա
ւանդ յայտ է զանազանութի սոցա
19 յենթագրութեան իւրեանց։

## Յաղագս Ընդհանրի.

Անհատն է մասն ուրուք բոլորի. Եւ է երկաքանչիւր առածքս՝ այս՝ բոլոր և մասն՝ որոշին յերկուս. քանզի բոլորն բաժանի յընդհանրականն և յամբողջականն. Նմանապէս և մասն բաժանի յընդհանրականն և յամբողջականն. Ընդհանրական բոլորէ՝ որ ստորոգի զիւրաքանչիւր մասնէ իւրմէ. որպէս զգայունն որ է բոլոր ձիոյ և իշոյ՝ և այլոց զգայնոց՝ ստորոգի զսոցանէ և զիւրաքանչիւր անհատէ նց. Իսկ ամբողջական բոլորէ՝ որ ոչ ստորոգի զիւրաքանչիւր մասնէ իւրմէ. որպէս սոկրատէս որ է՛ ամբողջական բոլոր հոգոյ և գլխոյ՝ և այլոց մասանցն՝ ոչ ստորոգի զնոցանէ. զի ոտն սոկրատի ոչ է սոկրատէս. Նոյնպէս և զընդհանրական և զամբողջական մասունս է տեսանել.

Զի ընդհանրականին մասն ունի զանուն և զբան իւրոյ բոլորին. որպէս սոկրատէս է մարդ, զգայուն, շնչա

20 ւոր, և բանական. Իսկ ամբող

ջական մասն ոչ կարէ առնուլ զա
նուն կամ զբան բոլորին իւրոյ • զի
ոտն սոկրատայ ոչ ընդունի զանուն
կամ զբան սոկրատայ։ Նա՛ զի ՚ի պա
կասիլ ընդհանրական մասանց և միոյ
մասին մնացելոյ՝ բոլորն գոյ• քանզի
՚ի գոլն միայն սոկրատայ՝ բոլոր մարդն
գոյ։ Իսկ ամբողջական մասին միոյ
պակասելոյ՝ բոլորն ոչ կարէ գոլ•
քանզի յոչ գոլ գլխոյն սոկրատայ՝
սոկրատէս ոչ կարէ գոլ• և յոչ գոլ
ոտիցն սոկրատայ՝ սոկրատէս ոչ է ամբողջ։
Նա՛ յայտնագոյն յայտէ՝ թէ սեռն է բո
լոր։ և տեսակն է մասն սեռի՝ և բո
լոր անհատից։ իսկ անհատն է մասն•
և ոչ բոլոր։ Բայց է բոլոր ամբող
ջական, որ ենթագրի այսպէս •
Անհատ է՝ որոյ յատկութիւնքն յաւելանին ՚ի
տեսակագոյնն։ որգոն, Դաւիթ է որդի
յեսսեայ՝ մարգարէ՝ թագաւոր •
Ահա՛ որդի գոլն յեսսէի՝ և մարգա
րէն և թագաւորն յաւելեալն առ մարդն
և յատկացուցին զոմն մարդ. ուստի՛ ...
21 Նա՛ անհատ ասի, զի ոչ հատանի

պետրոս 'ի պօղոսէ տեսակաւ. քանզի զանուն և զբան մարդոյն միայն ըն դունին. այլ յատկանան 'ի միմեանց պատահականօք. զի խաժակնութին և թխակնութին որք բաժանեն 'ի մի մեանց զանհատսն՝ են պատահմունք մարդոյն: Բայց ըստ կերպի իմիք են գոյացութիք անհատից. զի եբրայեցի գոլն պօղոսի ոչ կարէ բառնիլ 'ի նը մանէ: Վարձիլ, անհատ ասի, զի ոչ հատանի 'ի նմանամասնէյս. այլ՝ յան նմանամասնեայս. այս՝՝ 'ի հոգի և 'ի մարմին. որք են աննմանք իրերաց:

Եւս քանզի հինգ բարբառքս այ սոքիկ, սեռ, տեսակ, տարբերութի, յատուկ, անհատ, են ստորոգութիք: իսկ որ ստորոգի՝ կամ համանունաբար ստորոգի, կամ փաղանունաբար, կամ դասանունաբար, կամ յարանունա բար. վասն որոյ պարտ է գիտել զսո:

## Յաղագս համանունաց:

Համանունն է՝ յորժամ ոչինչ ըմբռնի պարզաբար, և նովաւ նշանա կեալքն՝ են հասարակք ըստ ան

ման միայն. քզի յաւելն՝ ակն, ոչինչ ըմբռնի պարզաբար. և ոչ կարէ ոք ենթադրել՝ թէ ակն՝ այս ինչ է. զի բաղումք են նշանակեալքն. և տմքն անհաղորդք են իրերաց ըստ բանի. զի ըստ անուանն միայն են հասարակ.

Յա՛ հոմանունն կրկին է. իսկական և պտհական. Իսկականն է՝ որ միշտ է հոմանուն. ո՛պ ակն, և այր, և այլք այսպիսիք. Իսկ պատահականն է՝ որ ըղձատելով առ այլս լինի հոմանուն ո՛պ ըստ կերպի կենդանի մարդոյնկարեալ պատկերն՝ հոմանունաբար ասի կենդանի մարդ. և բազմաց ասի առիւծ, որք ոչ են առիւծ. Ահա այսպիսիքս կոչին հոմանուանք պտհկնք

քզի կենդանին է սեռ. իսկ մարդ և առիւծ՝ են տեսակք. այլ սեռ և տեսակ, նաև տարբերուն և յատուկ փաղանունաբար ստորոգին զենթակայից իւրեանց. և ոչ հոմանունաբր.

## Յաղագս Փաղանուանց.

Փաղանունն է՝ յորոյ նշանակուէն 23 իր իմն ըմբռնի պարզաբար

և ենթագրի՛․ և նշանակեն լքն նովաւ՝
ըստ անուան բանի են նոյն և համան
գամայնք․ որգոն, կենդանի․ քանզի
յասելն կենդանի, իսկոյն ըմբռնի
կենսունակն և ստորագրի․ քանզի
կենդանին է գոյացութ մարմին սնըն
դական․ Իսկ զի ասացաւ թէ՝ նշանա
կեալսն նովաւ՝ ըստ անուան բանի են նոյն․
Քզի մարդ և տունկ՝ ոչ են նոյն ըստ
բանի․ բայց ըստ որում անուան են
հաղորդ միմեանց, ըստ նոյն անուան
բանի են նոյն․ զի ամ կենդանւոյ
բան նոյն է․ այսինքն գոյացութ մարմին
սննդական, Իսկ ասելովն՝ սն համանգա
մայնս, տարբերէ զփաղանունսն՝ի դաս
անուանց․ զի թէպէտ և դաս անուանց
ըստ փաղ անուան, բայց բաժանելքն
՚ի դաս անուանց՝ են միմեանց նախ
կին և վերջին․ որպ ուսանելոց եմք ՚ի
բացայայտութ նորին․ իսկ որոշելքն
՚ի փաղանուանց են համանգամայնք․
զի թռչունն և հետևակն բաժնեալք
ի շնչաւորէն՝ ոչ են միմեանց նախկին
24 և վերջին․ Բայց՝ փաղանուանց՝

են որք գոյացական տարբերութբ ան
ջատին ՚ի միմեանց. ո՛չ բանականն և
անասունն են գոյացական տարբեր-
թիք, և բաժանեն զէնչաւորն։
Այլ են որք պատահական տարբե
րութբ զանազանին. որպէս մարդն
բաժանի ՚ի խաժակն և ՚ի թխակն։

### Յաղագս Դասանուանց,

Դասանունն է՝ որով ըմբռնի իր
իմն. բայց նշանակեալքն ՚ի նոր
մանէ՝ են միմեանց նախկին և վերջին.
որգոն, հայր. քանզի հա՛յրն է՝ գոյ, և
իր, և ինչ. որ է ընդ դիմաբաժանեալ
ոչընչին, բայց բաժանեալքն յէակէն՝
գոյացութ և պատահումն՝ են միմեանց
նախկին և վերջին. քանզի գոյացու-
թիւնն է էակ ըստ ինքեան. իսկ պա
տահումն է էակ ըստ այլոյ։
Այլ յայտէ՝ զի ՚ի փաղանունս ո՛չէ
այսպէս. քանզի ո՛չէ էշն զգայուն
ըստ այլ իմիք. և ձիերն զգայուն
ըստ այլ իմիք. այլ ըստ նոյնին
ասին զգայուն։

## Յաղագս Յարանուան.

Յարանունք են՝ որք ըստ անուան և ըստ իրի ունին հաղորդութիւն իրերաց. և ունին զանազանութիւն ՚ի միմեանց ըստ եղանակի ածանցման. որգոն, առաքինութիւն, և առաքինի. քանզի այսորիկ ըստ սկզբնականն նոյն են. և ըստ վերջնոյն զանազանք. նմանապէս և ըստ իրին է իմանալ: Բայց՝ առաքինին յառաքինութենէն ածանցեալ է. զի ստանալով զառաքինութիւն՝ եղև առաքինի. վասնզի առաքինութիւն անուանի յարանուանող. իսկ առաքինին յարանուանեալ: Իսկ գրեթէ ամենայն յարանուանող անուն է՝ ՚ի բացական անուանց. և ամենայն յարանուանեալ է կցական անուն. քանզի առաքինութիւն և սպիտակութիւն, և այլք սոյնպիսիք, ոչ ստորոգին զունողաց իւրեանց. զի ոչ ոք առաքինի ասի առաքինութիւն. վասնզի ասի կցական. զի ի բաց մնայ յենթակայէն ըստ ստորոգման. Իսկ առաքինի և սպիտակ՝ և այլք այսպիսիք՝ ստորոգին զենթակայից

իւրեանց. վ՟յ ասին կց՟նք. զի կցին
ը̅ ենթակայի՛ն. Հր՟ յայտե ուրեմն՝
թէ որք իբաց միայն յենթակայից՝
որպէս մակացութի՟, նախանձ, գոյն,
և այլք այսպիսիք, կոչին բացականք.
Հր՟ են բառք ոմանք որք կոչին հա
մաբառք. ո՟պ այրի բառս՝ է անուն
և բայ. ուստի ո՛չէ համանուն, և
ո՛չ համաբայ. այլ՝ համաբառ.
Հր՟ գիտելի՛ է, զի ստ՟որգւթին կրկինէ.
Ենթացուցական, և Տար՟ցուցական.
Ենթացուցական է՝ որ զէութի՟ ենթա
կայի՛ն յայտնէ. ո՛րգոն, մարդն է բա
նական կենդանի. Ահա՛ բանականն
և կենդանին զմարդոյ ստորոգեալ՝
ցուցին զէութիւն մարդոյն.
Հր՟ Տարացուցական է՝ որ ո՛չ յայտ
նէ զենթակայն. ո՛րգոն, մարդն է մի
վանկ. կամ տեսակ. կամ փաղանուն
և այլք այսպիսիք՝ կոչին տարացուցա
կանք. զի ո՛չ յայտնեն զէութի՟ իրին.
Հր՟ արդ՝ մինչև ցայս վայր ուսինչ ճա
ռեցաւ զենթացուցական ստ՟որգւեց.
27 քանզի սեռ, և տարբերութի՟, և

տեսակ, և յատուկ, և անհատ։ Նաև հոմանուն, և փաղանուն, և դաս անուն, և յար անուն, են տարացուցականք. ուստի այժմ պարտ է ասել զընթացուցական ստորոգութենց.

## Յաղագս Ընթացուցական Ստորոգութեանց.

Ստորոգագոյն ստորգութի ընթացուցական՝ է հակն. որ է ընդդիմաբաժանեալ ոչընչին։ Ա՟ որոշի հակն ՝ի գոյացութի և՝ի պատահումն. գոյացութին է ինքնակայ. իսկ պատահումն է այլակայ։ քանզի ոմն մարդ ըստ ինքեան գոյ. իսկ ոմն սպիտակութի յումեմն մարդոջ գոյ. կամ նայլ մարմնոյ։ Ա՟ս, գոյացութին ՝ի գոլն գոյացուցանէ, և յոչ գոլն ապականէ՝, քանզի ՝ի գոլ բանական զգայնոյն՝ մարդն գոյ. և յոչ գոլն՝ ոչ գոյ. Իսկ պատահումն՝ ոչ ՝ի գոլն գոյացուցանէ, և ոչ յոչ գոլն ապականէ։ Քանզի ՝ի գոլն երաժշտու՟ ուրումն մարդոյ, ոչինչ յաւելու ըստ գոյացութե. և յոչ գոլն՝ ոչինչ ապականի ըստ գոյա
28 ցութեն. Ա՟ս, ոմն գոյացութի և

ոմն պատահումն բաղադրեալք 'ի մի՝
յանջատիլն 'ի միմեանց, նոյն գոյացութիւն
գոյ. իսկ նոյն պատահումն ոչ կարէ գոլ՝
զի 'ի կարմրիլ թղթոյս՝ սոյն թուղթս
գոյ. իսկ սոյն՝ սպիտակս անկարէ գոլ։
Հարց՝ որդ՝ երկաքանչիւրոցս գո՞յ ընդ-
հանուր՝ և գո՞յ մասնաւոր. որք լինին
չորք. ուստի արիստոտէլ զէակն 'ի
չորս բաժանէ։ Առաջինն է՝ զենթա
կայէ և ոչ ներենթակայում. որ է՝ ընդ-
հանուր գոյացութիւն։ քանզի մարդ
որ է ընդհանուր գոյացութիւն՝ զսոկրա
տայ ստորոգի. և 'ի սոկրատում ոչ է.
զի թէպէտ սոկրատէս մարդ է, սա
կայն ոմն մարդ է. այսու՝ պատահականօք
յատկացեալ և անհատացեալ. իսկ
մարդն տեսակ գոլով՝ ոչ լինի 'ի սոկ
րատում։ այսպէս է և կենդանին և
զգայունն, և այլ ընդհանուր գոյա
ցութիւնքն։ Երկրորդն է ներենթակայում, և
ոչ զենթակայէ. որ է մասնաւոր պա
տահումն։ որպէս ոմն քերականութիւն է 'ի
սոկրատում. և ոչ ստորոգի զսոկրատայ։
29 զի այլ է ենթակայն ըստ կայանի,

և ա՛յլ է ենթակայն ըստ ստորոգման։
իսկ սոկրատէսն՝ ենթակայ քերակա
նութե ըստ կայանի. վզի ո՛չ կարէ լի
նիլ ենթակայ քերականութե ըստ ըս
տորոգման. քանզի ո՛չ ասի սոկրտէս
քերականութի. և թէպէտ սոկրատէս
ասի քերկան, սակայն քերականն ո՛չ
նշանակէ զքերականութիւն. այլ նշա
նակէ զունօղ քերականութեն. որ է՛
ում գոյացի։ Երրորդն է՛ զենթակայէ
և նենթակայում. որ է՛ ընդհանուր
պատահումն։ ոպս առաքինութիւն զեն
թակայէ ստորոգի. այս՛՛ զարդարութն
զխոհեմութն, և զա՛յլ տեսակաց առա
քինութե. և է՛ նենթակայում. զի է՛
նանձինս մարդկան։ Չորրորդն է ոչ զեն
թակայէ և ո՛չ նենթակայում. որ է՛
մասնաւոր գոյացութիւն։ ոպս սոկրտս
ո՛չ ունի ենթակայ ըստ ստորոգման՝
զի ստորոգիցի զնմանէ. և ո՛չ ունի
ենթակայ ըստ կայանի, ոպս թէ իցէ
'ի նմա. քանզի է՛ ինքն նախկին են
թադրութի. որոյ զկնի ո՛չ գոյ այլ են
30 թակայ։ զի ած ընդհանուր գոյա

ցուցէ ենթակայ ըստ ստորգման. և
ամ պտհմանէ ենթակայ ըստ կայանի
Այլ յայսցանէ յայտէ, զի ստորգութ
ենթակայի՛ է ստորոգութի. և ո՛չ հա
կադարձ. զի ենթակայ՝ ո՛չ է միայն
ստորգութ ենթակայ. ոպ ըստ կայանի
ենթակայն՝ ո՛չ է ստորգման ենթակայ
Նաև առաջադրեալ ճանաչողին՝ ասի
ենթկյ. ոպ գոյնն ասի ենթա՛՛երից.
Այլ այսև յայտէ, զի ստորոգութին
և ենթակայն կամ համդէպք են մի
մեանց. որպ ծիծաղականն զմարդոյ
ստորոգեալ՝ համասարք են իրերաց.
Այլ կամ ստորոգեալն առաւելէ քան
զենթակայն. ոպ զգայունն զմարդոյ
ստորոգեալ՝ առաւելէ քան զմարդն
Իսկ նուազ քան զենթակայն ստորգութ
ո՛չ լինի. քանզի ստորոգութի է նշա
նակութի ենթակայի. այլ նուազն յառա
ւելն նշանակի. ոպ հետևակն և եր
կոտանին ըզմարդոյ ստորոգեալ՝ են
առաւել քան զմարդն. վսյ են նշա
նակութիւնք էութեան մարդոյն.
3x Բայց քանզի ստորոգութի ընդ են

2 Թակայիւն՝ է ձայն շարամանական · իսկ Հատորս այս՝ է յաղագս անշարա-
ման ձայնի · վասորոյ աստանօր պարտ է
ասել զանշարամանական ձայնէ ·

Ո՜ւ ամ անշարաման ձայն՝ ըստ արիս-
տոտէլի են Ժ · որք են այսոքիկ · գոյա-
ցութի · որակ · քանակ · առինչ · ուր · երբ ·
կալ · ունել · առնել · կրել ։ Ո՜ գաղա-
փարաւ ասասցուք · Վարդան՝ յայնմ
զի է մարդ՝ է գոյացութի · քերականն
է որակ · երկկանգունն է քանակ ·
Հայրն է առինչ · աստ գոլն է ուրին ·
այժմ գոլն է ըստ երբին · բազմեալն է
կալ · զգեստաւորեալն է ունել · գա-
նելն է առնել · գանիլն է կրել ·

Ո․ Հա այսոքիկ են անշարաման ձայնք՝
ոչ աւելի և ոչ պակաս · քանզի յիպարզ
ձայնից՝ է որ զէութի իւրին ցուցանէ ·
որէ գոյացութիւն · և է որ զզանազա-
նութի իւրին ցուցանէ · որէ որակն · և է
որ զչափն յայտնէ · որէ քանակն · և է
որ զհաղորդութիւն որ առայլս ունի՝
զայն յայտնէ · որէ առինչն · և են որք
ըստ տեղւոյ և ըստ ժամանակի գոլն
32 նշանակեն · և ըստ այսց է ուրն և

3 երբն, և է որ ցուցանէ զեղանակ գոլոյն 'ի տեղւոջ. որ է կալն, և է որ զունակութիւն յայտնէ. որ է ունելն, և են որք զգործս և զկիրս յայտնեն. որք են առնելն և կրելն. Արդ ահա այսոքիկ զէութիւն և զա̃մ պարագրութիւն էութեան յայտնեցին. որոց արտաքոյ ոչ ինչ է և ոչինչ իմանի. քանզի որ հարցանէ՝ արտաքոյ սց̃ ոչինչ հարցանէ. նմանա̃պ՝ և որ պատասխանէ՝ արտաքոյ քան զայսոսիկ ոչինչ պատասխանէ. զի որ հարցանէ՝ կամ զէութի իրին կամ իմանալ, կամ զորակն նորին, և կամ զայլս 'ի տասանցն. և որդ՝ զմիմի իւրաքչիւր սց̃ ըստ կարգի առել տեսցուք.

## Յաղագս Գոյացութեան.

Ըստ արիստոտէլի՝ գոյացութիւն բաժանի 'ի նախկինն և յերկրորդն. Նախկինն է անհատ գոյացութիւն. ո̃պ ոմն մարդ. իսկ երկրորդ է տեսակն և սեռն. ո̃պ մարդ, և զգայուն.

Արդ զի՝ նախկինն է անհատ գոյ̃ութիւն. քանզի այլքն ա̃մ կամ զնմանէ ստորոգին, կամ 'ի նմա են. Որք ստորոգին՝
33 են ընդհանուր գոյացութիւնք.

և որք են 'ի նմա ո՟չ ենթակայս՝ են պատահմունքն. Ո՟չ սոկր՟տս նախկին գոյացութ՟ի գոլով՝ է ենթակայ ընդհանուր գոյացուեց ըստ ստորոգման. քանզի ա՟մ վերինք զվայրնոց ստոր՟գին. զի սկ՟տս է մարդ, շնչաւոր, զգայուն, կենդանի, մարմին, գոյացութիւն.

Նմանպ՟է ենթակայ պատահմանց ըստ կայանի. քանզի 'ի սոկրատում է քերականութին, և այլ պատահմունքն. Այլ եթէ նախկին գոյացութ՟իքն ոչ իցեն, ոչ վերին գոյացաբար ստ՟որգութ՟իքն կարեն գոլ, և ո՛չ պ՟տհմունքն. վ՟ոյ է նախկին և իսկագոյն և տիր՟գյն և առաւել գոյացութ՟ի. քանզի երկրորդ գոյացութ՟իքն համեմատելով առ նախկին գոյացութ՟ին՝ են նուազ գոյացութ՟իք. Այլ ո՛րդ՝ ո՟չ ըն գոյացութ՟իս նախկինն առաւել է քան զ՟րդն, այսպէս և ներկրորդսն տեսակն առաւել է քան զսեռն. զի տեսակն հպագո՛յնէ անհատին. զի յասելն՝ սոկրատէս է մարդ, առաւել բացայայտի էութիւնն սոկրատայ, քան ասել զգայուն.

Յաղագս Հետեւմանց Գոյացութե:

Նախ, զի գոյացութիւնն ոչ ընդունի զյաւէտն և զնուազն. և ոչ եթէ գոյացութի քան զգոյացութի ոչէ յաւէտ և նուազ, զի այս ասացեալ է թէ անհատ գոյացութիւնն քան զընդհանուրն առաւել է. և տեսակն քան զսեռն յաւէտ է. այլ զի՝ ոմն մարդ ոչէ յաւէտ գոյացութի քան զայլ ոմն մարդ. և ոչ քան զոմն արջառ՝ Նմանապ և տեսակն. զի մարդ ոչէ առաւել գոյացութի քան զձի: Նոյնպէս և սեռն. զի շնչաւորն ոչէ առաւել գոյացութի քան զանշունչն. քանզի անկար է ասել թէ մարդն յոյժ երկոտանի է քան զձնձղուկս: Նաև ոչ ինքն ինքեան լինի յաւէտ և նուազ. քանզի ոչ լինի ասել թէ սոկրատէս երէկ մարդագոյն էր քան այսօր.

Այլ ըստ պատահմանց ոմանց վայելչաբար ասի. որգոն, սոկրատէս երէկ սպիտակագոյն էր քան այսօր: Բայց քանսիկն նա ոչ ընդունի զյաւէտն և զնուազն. և թէ ո՛րպ՝ ի քանակոջն տեսցուք.

Ունի, զի գոյացութ ոչ ինչ է ներհակն. և այս յայտ է. զի իւրաքանչիւր

ներհակ՝ ունի ինքեան հակակայեալ
ներհակ իմն. որպէս բարւոյն՝ չարն. առա
քինութեան՝ վատթարութիւն. սեւութեան՝ սպի
տակութիւն. նմանապէս և զայլ ներհակս է
տեսանել։ Իսկ մարդոյ կամ այլ գոյա
ցութեան ոչինչ ներհակ հակակայեալ երևի
Այլ ըստ ոլոմպեայ՝ ուր ոչէ յաւէտ
և նուազ, անդ ո՛չէ ներհակութիւն և
հակադրելի. զի ուր ոչէ ներհակութիւն,
անդ ո՛չէ յաւէտ և նուազ։ այլ ՚ի գոյ
ացութեան ո՛չէ յաւէտ և նուազ. ապա
ուրեմն ՚ի գոյացութեան ո՛չէ ներհակութիւն.
բայց քանակն ևս ոչ ունի ներհակու
թիւն. զոր ՚ի քանակումն տեսցուք.
Այլ և. զի ոչ ոք գոյացութիւն նենթակայ
ում է. քանզի նախկին գոյացութիւն
յայտ է՝ զի ոչ յումեքէ. վասն զի է՛ հիմ
ամբ ոմն ասացի. Իսկ երկրորդ գոյացութիւնք
երևի թէ նենթակայում են, բայց ո՛չ
են. քանզի ո՛չէ ՚ի սոկրատում մարդն
կամ կենդանին. զի որ ՚ի սոկրատո՛ւմ է
իբր նենթակայում, ո՛չէ մասն սկտյ.
որպէս ոտն և ձեռն. և ո՛չ փաղանունէր
ս՚որդի զսկրտյ. որպէս տեսակն և սեռն.
36 քանզի սկտս ունի զանուն և զբան

մարդոյ և զձայնոյ։ Իսկ զանուն և
զբան ․ քերականութեան ոչ ընդունի․
զի սոկրատէս ոչ է քերականութիւն․
Բայց յարանուանելքն ստորգիւն զսկզբ.
հոմանունաբար․ որպէս, սկսեալ է քե
րական, կամ սպիտակ․ ահա զանունս
ենթակայողաց էակաց ոմանց ընկա
լաւ․ բայց զբանսն ոչ ընդունի․ քզի
յասելն՝ զինչ է սոկրատս, ոչ լինի ասել
թէ քերական, կամ սպիտակ․
Չորրորդ, զի գոյացութիւն որ մի և նոյն
թուով է՝ ներհակաց է ընդունակ․
Մի և նոյն թուով ասի, զի գոյնն ու-
նի զսպիտակութիւն և զսևութիւն․ բայց
նոյն գունոյ՝ անկար է գոլ սպիտակ և
սեաւ․ իսկ նոյն մարմին լինի սպիտակ
և սեաւ՝ յայլ և յայլ ժամանակս․ և
նոյն մարդն լինի վատթար և առաքինի
Բայց՝ ը հանուրքն ոչ են ներհակաց
ընդունակ․ քանզի ամ ընդհանուր ՝ի
նոյնմ գոլով է անյեղլի և անփոփոխ․
Նաև անհատ գոյացութիւնք ոմանք ոչ
ընդունին զներհակս․ որպ արեգակն․
և երկին․ և այլք․ Նա՛ ահա յայտ է թէ
37 ամ ներհակաց ընդունակ՝ գոյա

ցուցի է. բայց ո՛չ ամ գոյացութի ըն͞ունի զներհակս. Ի՞նչ՟դ, զի որ գոյացութի է՝ կամ է՛ նախկին ենթադրութի, կամ զնախկինէն ՚ի զինչէութիւն ստորոգութի. Նախկին ենթադրութիւնք են անհատ գոյացութիւնքն. քանզի ոչինչ է նախքան զնոսա ենթադրելոյ. և զնոցանէ ՚ի զինչ էութիւն ստորոգիլքն են երկրորդ գոյացութիւնքն. Այս զի կրկին է գոյացութի, այսինքն նախկին և երկրորդ. ուստի կրկին է և ուրոյնն. այս՝՝ նախկին ենթադրութի. և զնախկինէն ՚ի զինչէութիւն ստորոգութի.

## Յաղագս Քանակի.

Քանակն որոշի յերկուս. ՚ի տարորոշն և ՚ի շարունակն.

Տարորոշ է՝ որոյ մասունքն ո՛չ ունին հասարակ սահման. իսկ շարունակ է՝ որոյ մասունքն համահաւաքին ՚ի մի տեսակ շարունակութիւն. Այս՝ որդ՝ յատկութի շարունակին է, զի մասունքն ունիցին հասարակ սահման. և ս, զի յըմբռնիլ միոյ մասին՝ այլ մասունքն յարառոցեալք իցեն. և ս, զի ՚ի հաւաքմանէ մասանցն տեսակ իմն երևեսցի. և ս, զի մասն միոյ բոլորի՝ ո՛չ կարէ գոլ մասն այլում

բոլորի. Եւ այս յայտ է 'ի մարմնոց մե
րոց. զի 'ի հաւաքմանէ անդամոցն որք
են մասունք մարմնոյ՝ երևի՛ տանկ իմն.
որ է բովանդակութի մարմնոյ. Նաև 'ի
մի անդամն յարաբերին մի անդամքն.
այլև մի անդամքն ունին հասարակ
սահման. և հասարակ սահման է մէջն.
առ որ շարամօտին մասնկունքն.
Այլ և տախտակք կցեալք 'ի մի՝ ունին
մէջ զկցումն կողմանց. այսպ և ան
դամք մարմնոյ. քանզի իւրաքանչիւր
անդամք ունին կողմանս. որովք են հա
ղորդք իրերաց. Եւ այս յայտ է, զի
մասն միոյ շարունակ քանակի, ոչ կա
րէ գոլ մասն այլում շարունակի.
քանզի անկար է գոլ անդամ մարմնոյ
միոյ՝ այլ մարմնոյ. Եւ թէպէտ տախ
տակ կամ բևեռ իմն դրան իմիք՝ կարէ
գոլ այլոյ իմիք դրան մասն, սակայն
առաջին տեսակ շարունակութեան՝
այս՛՛ դուռն՝ ոչ ևս գոյ ամբողջ. քանզի
անկար է մասանց շարունակին՝ գոլ
մասունք երկուց բոլորից ամբողջ մ
նացելոց. Իսկ տարորոշն է ընդ դէմ
 այսց. քզի վար և դան փաղառու

Թիկքս որք երևին մասունք գոլ վար դան անձանս, ոչ ունին հասարակ սահման. քանզի մէջ ունող մասունքն ոչ կարեն առանց միմեանց գոլ: Իսկ յասելն վար՝ ոչ յարառոցի դանն. և յասելն դան, ոչ յարաքարշի վարն: ապա ուրեմն ոչ են կցեալք կոպարան ՚ի մի հասարակ սահման: Այլ և վարն ոչ միայն վարդանայ երևի մասն, այլ և վարդապետի. և այլոց բազմաց: Նաև դանն ոչ միայն վարդանայ է մասն, այլ և որմզդանայ. և այլոց բազմաց. և որդ՝ դուն այսուքիկ ՚ի զանազանութիւն տարրորոշին և շարունակին. իսկ այժմ

ասելի է զտեսակաց տարրորոշին և շարունակին.

Տարրորոշին տեսակք են երկու. Թիւ, և փաղառութի: Այն զի՛ տարրորոշէ Թիւ. քանզի որք մասունք երևին Թըւոյ՝ ոչ համահաւաքին ՚ի մի տեսակ. որոց տեսակք Թւոյ որք ՚ի ներքոյ տասին են՝ Թէպէտ բաղկացուցանող մասունք երևին տասին՝ բայց ոչ են. զի իւրաքանչիւր նզ ըստ բանի իւրում 40 կալեալ՝ արտաքոյ տասին ելանեն.

Քանզի՛ մի և ճ̃ և ջ̃ և ջ̃ և ճ, է հըն
գետասան. այսպէս մինչև ՚ի տասն ըստ
տեսակաց իւրեանց կալեալ՝ ոչ պարու
նակին ընդ տասամբն. ապա ու՛՛ Թի՛
ոչ է շարունակ. Քանզի մասունք
շարունակին իւրաքանչիւր ըստ բանի
իւրում պարունակին ընդ տեսական
միով. ոչ մասունք մարմնոյ իւրաքան
չիւր ըստ տեսակի իւրում համահա
ւաքեալեն ՚ի բաղկացուն մարմնոյ միոյ
Նաև մասունք Թ̂ւոյ ոչ յարաքարշեն
զմիմեանս. քանզի յասելն՝ Ե՝ ոչ ևս է
ըևի այլ իմն Ե. որք մասունք տասին
Թըւին գոլ. այլ որքան Է ասի՝ նոյն
հինգն է. զի ոչ գոյ այլ ևս Ե. քանզի
իւրաքանչիւր Թի՛ւ անմարմին տեսակ
իմն է տարորոշեալ յայլոց. զի ոչ ու
նին հասարակ սահման, որով հաղորդես
ցին իրերաց. քզի կոպարան կցեալքն
յարաքարշեն զմիմեանս. իսկ սոքա ոչ
յարաուոցին ոչ ցուցան. Նոյն, հարկ
սահմանն որ կցէ զմասունս ոմանս՝
ոչէ կցել մասունքն Թէպէտ և ինքն
կցեալ է ՚ի մասունս. ոչ ներկայն որ է՛
41 հարկ սահման անցելոյն և ապառ

Նոյն՝ որ է անցեալն և ապառնին. թէ
պէտ է կց̃լ ՚ինմ̃ և է մասն ժամանակի.
Իսկ ըն մասունս տասին ոչինչ երևի
այնպիսի ինչ. ոպ̃ թէ ոչ իցէ ՚ի նոցանէ
և կցեսցէ զնս̃. քանզի ոչ ինչ է մէջ
միոյ և ինան. երկուց և ութի. երից
և եօթնի. չորից և վեցի. հնգի և հնգի.
Նաև թէ մի դիցես իմէջ ս̃ց զի իցէ հա
սարակ սահման երկուց մասանցն,
յայնժամ լինի մետասան. որէ այլ իմն
տեսակ թւոյ. և թէ զմին ՚ի նոցանէ
առել դիցես իմէջ, յայնժմ լինի ինն.
Ուստի յայտէ թէ ոչ ունին հասարկ
սահման. ապաու՛՛ թիւն է տարորոշ.
Նմանապ̃ և փաղառութին է տարորոշ.
զի վար և դան՝ և այլ փաղառութիք՝
ոչ ունին հս̃րկ սահման առ՚ի կցել.
և ո՛չ յարաքարշին ՚ի միմեանց. այլ ի-
րաքանչիւր սոցա տարորո՛շ դոյ.
Նաև զի քանա՛կ է վանկ. զի վանկ ումն
չափէ՛ զերումն շնչոյ դոլ երկամանակ.
և ումն վանկ չափէ զեզամանակաւորն.
Իսկ Շարունակին տեսակք են ե.
գիծ. մակերևոյթ. մարմին. ամանակ.
42 և տեղի, Գծին մասանց հա̃րակ

սահմանք կէտն • իսկ կէտք անյայտ նիշն • որ է ունայնութի • քանզի գիծն զերկուս կողմունս միայն ունի • վսն մասնկունք գծին կիտիւ կցին •

• Քանզի բ մասունք գծին, և գ մասունքն, և կամ այլ մասունքն, կիտիւ են կցեալք առ միմեանս • զի բ ծայրիւ և առանց լայնութե ըմբռնեալ չափն՝ ոչ այլ ինչ է, եթէ ոչ գիծ • և մասըն կունք գծին՝ ոչ այլ իւիք անջատին և կցին, եթէ ոչ ունայնութբ • որէ կէտն • Իսկ մասանց մակերևութե հորկ սահմանէ գիծն և կէտն • քանզի մասունք մակերևութես որ իվր թղթոյս երևին, գծիւ և կիտիւ են հորկեալ • քանզի ծագէ իծագ գիծ է • Իսկ մարմնոյ մասանց հորակ սահմանէ մակերևոյթն և գիծն և կէտն և զայսոսիկ տես 'ի վր տախտակի իմիք • զի 'ի ծագէ իմն քէ տախտակին մինչև 'ի հանդէպ ծագն առանց այլ կողմանցն իմացեալ՝ գիծ միայն է • և իւրաքանչիւր երեսք տախտակին առանց խորութե ըմբռնեալք, մակերևոյթեն • իսկ հանդերձ խորութբն մարմին է • Այս յայցանէ

յայտէ, զի մարմին ոչ է հ՟րկ սահման մասանց մակերևութեան և գծին. քանզի ոչ եթէ ըստ խորութեան անջատին և կը ցին և չափին մասունք սպիտակութեանս որ ի վերայ թղթոյս չափեալ երևին, այլ ըստ գծի և ըստ կէտի անջատին և կը ցին և չափին. Նոյնպէս և մակերևոյթն ոչ է հասարակ սահման մասանց գծին. քանզի իւրաքանչիւր մասունք գծին որ ի վերայ թղթոյս գոն, ոչ եթէ ըստ մակերևութեանս այսմիկ անջատին և կը ցին և չափին, այլ ըստ կէտիցն.

Ապա ու՛ մասանց մարմնոյ հասարակ սահ մանէ մակերևոյթ և գիծ և կէտ. զի 'ի սոսա կցին մասունք մարմնոյ. և սո քօք բովանդակի մարմին. և մասանց մակերևութեան՝ հասարակ սահմանէ գիծ և կէտ. և մասանց գծի՝ կէտ. Ըստ այսցէ և տեղի. քանզի մասունք մարմնոյ ու նին հասարակ սահման. ապա ու՛ և տեղոյ մասունքն. Քանզի ոչինչ մասն մարմնոյ է առանց տեղւոյ. զի տեղի է պարագրու թի մարմնոյ, և ունայնութի. զի մարմին 'ի մարմնի գոլով՝ տեղի 'ի տեղւոջ գոլ.
44 ուստի ըմբռնեալն կամ մարմինէ,

կամ ունայն • որ ասի տեղի։ Այլ աստ
տարածութեւնն է՝ թէ բնաւ զանազանին
՚ի մարմնոյն կէտ և տեղի։ զի երկուցն
և ս ունայնութ՟ ասացաւ։ Մակերէ թէ
ունայնութ՟ որ ըն մասնկունս գծինէ
որք են կողպարք մասանց գծին, ասին
կէտք։ իսկ ունայնութ՟ որ ընմասնկունս
մարմնոյն որքեն կողպարք մասանց մար
մնոյ • որ իբրև մակերևոյթ երևի,
ասի տեղի։ ուստի դաւիթ փիլիսո
փայ՝ ասէ զմակերևոյթն տեղի։
Շարունակ է և ժամանակն • զի է հա
սարակ սահման ներկայն • յոր շարա
մօտին անցեալն և ապառնին։
Այլ դարձեալ, բաժանի քանակն՝ ՚ի դրու
թն ունօղն, և յոչ ունօղն։ Դրութ՟
ունօղ է որ զետեղեալ է ուրեք։ ըստ
այսմ է գիծ, մակերևոյթ, մարմին, և
տեղի. Այլ թէպէտ գիծ երևի ոչ ու
նել դրութ՟, զի ըստ ինքեան ո՛չ է զետե
ղեալ ուրեք, սակայն ՚ի մարմնի գոլով՝
ասի գոլ ուրեք։ այսպ՟ և մակերևոյթն
հանդերձ մասամբք իւրովք Ձինքեն՝
ա" ինքն յինքեան ո՛չ թըւի գոլ ու
րեք. բայց ՚ի մարմնի գոլով՝ է ուրեք։

բայց գծին մեկուսանալն 'ի տեղւոջէ՝ յո՛յժ յայտնագոյն երևի քան ըզ մակերևութեն։ Ոպարտեմ գիծ և մակերևոյթ ըստայնմ զի են 'ի մարմնի՝ զետեղեա՛լք են մասամբք իւրեանց 'ի մարմնի։ Նոյնպէս և մասունք մարմնոյ զետեղեալք են 'ի բոլոր մարմնոջ․ այսպէս և մասունք տեղւոյ․ զի ուր գոն մասունք մարմնոյ, անդ են և մասունք տեղւոյ։ Իսկ ոչ ունող դրութեն՝ են թիւ և փաղառութի և ամանակ․ քանզի այսորքիկ ո՛չ են զետեղեալ ուրեք․ Բայց դա՛ս ունին սոք․ զի 'ի թուելն՝ մինն նախկին է քան զերկուսն․ և յասելն՝ փաղառութեց մինն նախադասի՛ միւսոյն․ և յամանակումն՝ անցեալն նախ է քան զներկայն․

### Յաղագս Յատկութեանց Քանակին․

Նախ՝ զի ո՛չ ընդունի զյաճախոն և զնուազն․ քանզի կանգունն կանգնոյ ո՛չ է յաճախ և նուազ․ նմանապէս և երկկանգունն։ Այսպէս և միակն․ քանզի միակն ինքն յինքեան ո՛չ առաւելու և ո՛չ նուազի․ և առ այլ թիւս ո՛չ բաղ



դատի․ վասն զի իւրաքանչիւր թիւ

ըստ ինքեան տեսակ իմն է։ Նոյնպէս և
փաղառութի։ Ջզի մարդ փաղառութիս
’ի նոյնութեան գոլով ոչ ինչ առաւելութի
կամ նուազութի ընդունի։ Նաև յայտ է՝
զի որք զյաւէտն և զնուազն ընդունին
ոչ են միշտ ’ի նոյնութեան. քանզի ոմն
սպիտակ՝ այժմ է յոյժ սպիտակ քան
թէ երէկ։ Իսկ ’ի քանակութեան ոչ ինչ է
այսպիսի. քանզի ոչ լինի ասել թէ, ո՛
փաղառութիս այժմ նուա՛զ ա է, կամ
նուազ փաղառութի, քան թէ երէկ. և
առ այլ փաղառութիս ոչ համեմատի։
զի իւրաքանչիւր վանկ զանազանեալ
տեսակ իմն է տարորոշ։ Նկդ, զի ’ի քա
նակո՛ն ներհակութի ոչ է. զի ուր յա
ւէտ և նուազ ոչ է, անդ և ներհակութի
ոչ է։ Նորդ, զի հանդէտ և անհանդէտ
զոյգ և անզոյգ՝ ըստ քանակին ասին.
և այսէ յատուկ քանակին։ զի զոյգ և
անզոյգ զթուոյ ստորգին. և հանդէտ
և անհանդէտ՝ ըստ մարմնոյ և ըստ մար
մնականի ասին։ Ըստ մարմնոյ, որգոն
ալիւրս այս՝ հանդէտ է այնմ ալեր ծ
կշռոյ. և ըստ մարմնականի, հի՛կէն,
47 սպիտակութիս այս որ ըստ չափոյ

3 մակերևութս է՝ հանգէտ է այնմ սե
ռուժ. ըստ այսց և անհանգէտքն ասին
Նաև գիտելի է, զի մարմին ըստ այնմ
զի է ենթակայ պատահմանց՝ է գոյացութ.
Իսկ ըստ այնմ զի է ունող վեց կող
մանց, այսինքն երկայնութե լայնու
թեան և խորութեան, է՛ քանակ.

## Յաղագս Առընչին.

Առընչէ՝ որոյ գոլն վերաբերի առ
այլս. և հակադրի հոլովիւք՝ և
ոչ ըստ ստորոգման. որգոն, մեծ.
քանզի մեծ՝ ըստ ինքեան անկարէ գոլ
կամ իմանիլ. այլ վերաբերութբ առ
այլս իմանի մեծն. քանզի մեծ իմն քան
զոմնէ մեծ. և հակադրի հոլովիւք և
ոչ ըստ ստորոգման. զի մարդն և ծի
ծաղականն հակադրին ըստ ստորոգման,
այլ ոչ հոլովիւք. որգոն, մարդն ծի
ծաղական է. և ծիծաղականն մարդ է.
Իսկ առընչն հոլովիւք հակադարձի.
որպէս, հայր որդւոյ է, և որդի՝ հօրէ.
մեծ քան զփոքրն է, և փոքր քան զմեծն է.
Առընչին է ինչ որ պարզ է, և է ինչ
որ բաղադրեալ. Պարզ է որ արտաքոյ
48 այնմ առ որ վերաբերի՝ ըստ առըն

4 չուն․ որպէս հայր գոլն առ որդի վերա
բերի․ բայց կայացումն հօր՝ ոչ է բա
ղադրեալ ընդ որդոյ․ այլ ըստ ինքեան է․
իսկ բաղադրեալն է՝ որ ոչ է արտաքոյ
այնմ առ որ վերաբերի ըստ առընչութեան․
որպէս բոլոր գոլն՝ վերաբերի՝ առ մա
սունսն․ և ոչ է արտաքոյ մասանցն․
զի կայացումն բոլորին և մասանցն՝ առ
միմեանս է․ Բայց հակադարձումն առընչից
ոչ է ընդ միով հոլովին․ այլ ընդ զա
նազան հոլովիւք․ Որպէս՝ որ գոն,
Հաւն՝ թոռինն է․ և թոռն՝ հաւուն․
Կրկնապատիկ քան զկէսն է, և կէս՝
կրկնապատկին է․ Նմանն՝ նմանին իւ
րում է նման․ և աննմանն՝ աննմանին․
Հանդէտն՝ հանդիտին իւրում է հան
դէտ․ և անհանդէտն՝ անհանդիտին․
Զգացումն՝ զգալւոյն է․ և զգալին՝
զգացմամբն է զգալի․ Գիտութիւն՝ գիտե
լւոյն է․ և գիտելին՝ գիտութեամբն է գիտելի․
Բաղադրեալն որպէս, Բոլորն՝ մասանցն
է․ և մասունք՝ բոլորին են․ Դրութիւն՝
դրելւոյն է․ և դրեալն՝ դրութեամբն է․
Շարժութիւն՝ շարժնոյն է, և շար
ժունն՝ շարժութեամբն է․

Առաքինութի՛ առաքինութիւնն է. և առա
քինին՝ առաքինութիւնն է առաքինի.

Նոյն գիտելի է, զի թիւն և թւաւորն
հնգերորդին հոլովմունք. որգոն, թիւ՝
թւաւորին է. և թւաւորն՝ թւոյն է
թւաւոր. ըստ այսմ է և գլուխն և
գլխաւորն. և այլք այսպիսիք.

Բայց ոչ իսկապէս առ ինչ երևին այ
սոքիկ. քանզի առինչն թէպէտ լինի
իմն գոյացութեան, սակայն ոչ է գոյ՛.
որպէս ծառայ անուանէ իմն մարդոյ,
բայց ոչ ունի գոյացական նշանակութ
իւն մարդն. այլ է պատահական նշանա
կութ իմն մարդոյ. վերաբերելով առ
տէրն. իսկ թիւ և թւաւոր ոչ են պա
տահական նշանակութիք. Նոյնս, ծառայ
առանց տեառն ոչ իմանի. քանզի անկար է
այլ ոք ըստ ինքեան իմանել տէր կամ
ծառայ. Իսկ թիւ առանց թւաւորի
իմանի. զի թիւ իմն երևեալ առանց
թւաւորի՝ իմացեալ լինի թէ թիւ է.

### Յաղագս Հետևմանց Առնչից.

Նախ, զի ընդունի զյաւելումն և զնը
ւազն. քանզի ումեմն առաւել նման է
 ոմն ք̃ զոմն. բայց ոչ ամ̃ առինչք

ընդունին . քանզի հայր և հաւ և այլք
այսպիսիք՝ ոչ ընդունին զյաւէտն և
զնուազն. Երկրորդ, զի ներհակութիւն դոյ
յառընչոջս . զի առաքինութիւն՝ մոլութեան
ներհակ է. և մակացութիւն՝ տգիտութեան.
բայց ոչ ամենայն առ ինչ ընդունի զներհա
կութիւն. քանզի շատին և սակաւուն,
կրկնապատկին և կիսոյն, և այլոց այս
պիսեաց, ոչ ինչ է ներհակութիւն.
Երրորդ, զի առ ինչքն համանգամայն
գոն. զի տէր և ծառայ համանգամայն գոն.
բայց մակացութիւն ընդ մակացելոյն ոչ է
համանգամայն. քանզի մակացելին նախ
կին է քան զմակացութիւն. զի մակացելիք
բազումք գոն, զորոց զմակացութիւն
չև ևս եմք ստացեալ. իսկ մակացելիքն
գոն և ասին մակացելիք. նմանապէս և
զգալիք նախկին են քան զզգացումն.
որպէս մէջ երկրի է զգալի, բայց զգա
ցումն նորա չև ևս գոյ. իսկ հայր ա
ռանց որդւոյ ոչ է և ոչ ասի.
Չորրորդ, զի հոլովին հակադարձին.
Հինգերորդ, զի գոյն իւր է առաւել.
Չորրորդ և երրորդ յատուկք են ու
րոյնք առընչին.

## Յաղ՛՛ Որակի և Որակութեան։

Որակ է զանազանումն զանազանից որգոն, գեղեցիկ, տգեղ, առաքինի, մոլի, և այլք։ Իսկ որակութիւն է յորմէ և յորում որակն լինի. որգէն գեղեցկութիւն, առաքինութիւն, մակացութիւն. քանզի ՚ի մակացութենէն մակացուն լինի և ըստ գեղեցկութեան գեղեցիկն. նմանպ՟ և ըստ այլ որակութեանց այլ որակքն. Այլ որակութեանց ոմանք բնականք են, և ոմանք ստացականք։ Բնական է որ ՚ի ծննդեան անդ ՚ի բնէ եղեալ է. որգոն, ուժեղ, տկար, հիւանդ, մրցական, դեղին, և այլք. որք միանգամ ՚ի բնէ գոն։ Այլ բնականն կրկին է. զի է որ առ ամենեսեան գոյ. որպէս ծիծաղական գոլն մարդոյ, և սևութիւն ագռաւու, և սպիտակութիւն ձեանն. և է որ անհատին միայն է. որպէս հիւանդոտ գոլն սոկրատայ, և խաժակնութիւն պօղոսի, և ընթացականութիւն Ասայէլի, և յիմարութիւն չիւղարայ։ քանզի ոմանք ըստ բնականին՝ են բարկացողք, և ոմանք ողջախոհք, և ոմանք մոլիք, և այլք
52 այսպիսիք։ Իսկ ստացականն է

ընդ դիմաբաժանեալ բնականին • զի
է՛ յետամտական • որգոն, մակացութիւն •
առաքինութիւն • առողջութիւն • հիւանդու
թիւն • ջերմութիւն • ցրտութիւն • և այլք •
Նա̂ որդ՝ մրցական և ընթացականք են
որք ՚ի բնէ գոն • քանզի բազումք յու
ժեղութենէ՛ են մրցականք, և ոչ ՚ի մրցա
կանութենէ • զի ՚ի մրցականութենէ մարտիկն
ոչ է ըստ ուժոյն, այլ ըստ արուեստին •
Նմանապէս և որ ՚ի բնէ է սրընթաց, ոչ է
յընթացականութենէ ընթացական • այլ
ըստ թեթևութեան մարմնոյն, և ըստ յաջո
ղութեան անդամոցն է ընթացական • և ոչ
՚ի յուսմանէ • Իսկ որ յուսմանէ է՝
է և ասի յընթացականութենէ ընթացիկն •
և ՚ի մրցականութենէ մրցական • և յողջախո
հութենէ ողջախոհ • Նա̂ թէպէտ բնական
մրցականն ասի ունօղ մրցականութեան,
սակայն զանազանի ՚ի ստացական ունո
ղէն • զի սա ստանալով զմրցականութիւն
եղև մարտիկ • իսկ բնականն ոչ այսպէս •
Նա̂ որդ., որք ՚ի բնէ գոն՚ են ըստ բնակին
սեռիւն • և որք ՚ի կրթութենէ գոն՚ են ընդ
ստացական սեռիւն • Նա̂ ստացկացն
53 ոմանք են յոգնամանակագոյնք,

և դժուարաշարժագոյնք. որպէս մակա-
ցութիւնք և առաքինութիւնք. քանզի այսոքիկ
տաժանմամբ ստանին և դժուարաւ
անջատին ՚ի ստացողէն. վասն այսորիկ
այսպիսիքս ասին ունակութիւնք.

Այլ ոմանք են դիւրափոփոխք և արա-
գաշարժք. որգոն, հիւանդութիւն, և
ցրտութիւն. Այլ թէ ՚ի սոցանէ իցեն որք
դժուարաւ անջատիցին յենթակայէն,
որպէս հիւանդութիւնք ոմանք կամ դժուա-
րաւ անջատին, կամ ամենևին ոչ ան-
ջատին յենթակայէն. ասին ունակու-
թիւնք և նոքա. իսկ դիւրափոփոխքն
ոչ են ունակութիւնք.

Գրդ՝ ոմանք են կրականք և կիրք,
և ոմանք անարուք. Կրականքն կամ
յախտէ եղեալք են, կամ ախտաւորք են
յԱխտէ եղեալ՝ որպէս յերկնչելոյն դե-
ղին լինի, և յամօթոյն շառագունի՛.
Իսկ ախտաւորք են ենթակայք զգա-
ցութեց. քանզի ջերմութի և ցրտութի, չո-
րութի և դիջութի, հիւանդութի և խոշո-
րութի և այլք այսպիսիք, ախտացուցա-
են զշօշափական. Այլ քաղցրութի և
 դառնութի՝ կիրք լինին ճաշակելեաց

և ՚ի հօտոյն հեշտանայ և խորշի հոտո
տելիքն. և ՚ի ճնչմանէ հեշտանայ և
զզուի՝ կամ խլանայ լսելիքն։ Իսկ թէ
սանելիքն, է զի հեշտանայ ՚ի գունոց.
և է զի ՚ի հայելին նուազի ՚ի լուսոյ. և
է զի կուրանայ։ Ա՞ տեսակս այս կրօ
կին անուամբ յորջորջին. այս՛՛ կրական,
և կիր. քանզի քաղցրութին ՚ի մեղրն
գոլով կրական է. իսկ ՚ի ճաշակելիսն
կիր է. քանզի քաղցրութին ՚ի մեղրն՝
ոչէ կիր. Եւ վնկ ասի կրական, զի է ՚ի
մեղրն. այլ զի կիր լինի ճաշակելեացն՝
վնկ ասի կրելի. Ըստ այսմ է և ջեր
մութի՝ և ցրտութի, և այլք այսպիսիք.
Իսկ անախտ է՝ որ ոչ յախտէ իմեքէ
լինի. և ոչ յումեք կիր լինի. ոպ՟ մա
կերևութի. զի ձևք և իւրաքանչիւր
կերպ, և ուղղութի և ծռութիւն,
և այլք այսպիսիք՝ ոչ են կրականք.
Ա՞ զանազանին ՚ի միմեանց կերպ և
ձև. զի ձևն է տեսութի ըստ եզերացն.
իսկ կերպն է տեսութի յեզերցն ամէջն.
Ա՞մ՝ ըստ դասութի՝ կերպն է յատես
կենդանեաց. իսկ ձևն անկենդանեց.
55 Ա՞ զի որակք են այսորիկ. քզի

ենթակայք մ͞ջ որականան սոքօք ։ զի
ընդունակ եռանկիւնուն եռանկիւնի
աւի. և բոլորակուն բոլորակ. և ուղ
ղուն ուղիղ, այսպէս և այլքն.
Իսկ գիտելի է, զի մակերևոյթն ըստ
չափոյ ձգեալ գծիցն՝ է քանակ. այլ
ըստ այնմ զի ՚ի պարունակութենէ գը
ծիցն երևի նկար իմն, է՛ որակ.
Իսկ ընդ այսու սեռիւ երևին ծղում
գոյնք. քանզի գոյնք քարանց և բու
սոց և այլոց բազմաց՝ ոչ ինչ յախտէ
եղանին. և երբեք՝ յայսպիսեաց ո՛չ
ախտանան. քանզի շօշափականն՝ իջեր
մութք յեղափոխեալ՝ աւի ջերմն իսկ
երես ո՛չ աւի կանաչ կ դեղին, կամ
ըստ այլ գունոց գունաւորեալ.
Իսկ թէպէտ գոյնք բազումք հեշտա
ցուցանեն կ զզուեցուցանեն զերեսս
սակայն ո՛չ այնպէս յեղափոխեն, որպէս ենթա
կայք շօշափելիսն և ճաշակելեացն առնեն
Ի՝ պարու՛՛ գոյն որ յախտէ եղանի՝ ընդ
կրական սեռիւն է. իսկ որք ոչ յախ
տէ եղանին՝ վ͞ն ոչ յոյժ ախտացուցա
նելոյ զերեսս՝ ո՛չ իսկ պ͞ աւին կրականք
 Իսկ այսմ են և ծնչումն և հոտն.

զի ՚ի սոցանէ ոմանք յախտէ եղանին·
եւ ոմանք ոչ, նաեւ ոչ այնպէս յեղափոխելն
զգածութիւն, որպէս ջերմութիւն եւ դառ-
նութիւն. այսպէս է եւ ողորկութիւն եւ խոշո-
րութիւն. անդայտութիւն եւ կարծրութիւն.
Այլ տես, զի հիւանդութիւն թէ ՚ի բնէ
է, է ընդ բնական սեռիւն. եւ թէ յե-
տամտական է, է ընդ սոցին սեռիւն.
եւ ըստ այնմ զի է կիր մարմնոյ, է ընդ կրա-
ւորական սեռիւն. Ա՛. յայս ըրելք գոն.

### Յաղագս Հետեւմանց Որակին.

Առաջին, զի ներհակութիւն յորակիսն.
քանզի առաքինութիւն մոլութիւն ներհակ է.
եւ երկոքեանն որակութիւնք են, եւ սե-
ւութիւն սպիտակութիւն. նմանապէս եւ ՚ի սոյնս
յարանմանեալսն ասին. որգոն, առա-
քինոյն՝ մոլին. սեւին՝ սպիտակին. ապա՛
որակութիւնք եւ որակք ունին ներհակու-
թիւն. բայց եռանկիւնութիւն եւ բոլորա-
կութիւն եւ այլ ձեւոց ոչ ինչ է ներհակ.
զի մակերեւութիւնքն աններհականք են.
Երկրորդ, զի զյաւելուն եւ զնուազն
ընդունի. քանզի ոմն սպիտակագոյն է
քան զոմն սպիտակ. եւ ոմն քերականա-
57 գոյն է քան զոմն քերական. բայց

քերականութ քերականութ, և արդա
րութ արդարութ ոչ լինի աւել յաւէտ
և նուազ. քանզի արդարութ տեսակէ.
այլ ոչ ինչ տեսակ ընդունի զյաւէտն
և զնուազն. զի ամ ընդհանուրք ան
յեղլիք են. բայց ոմն արդարութ քան
զոմն արդարութիւ է յաւէտ և նուազ.
այսպէս և այլ անհատքն ասին.

Արդ, զի նման և աննման ըստ որա
կին ասին. և այս է յատուկ որակին.
Աւ արդ՝ դոյնն զսպիտակէն փաղա
նունաչար ստորոգի. և սպիտակն զա
լերէ հոմանունակի. իսկ սպիտակու
թին և սպիտակին են յար անուանք.

### Յաղագս Առորման.

Առնելն որոշի յածելն և յանձն
ածելէ՝ որ ներգործութ իմն
՚ի ներգործողէ ումեքէ ածեալ լինի
՚ի կրող իմն. և կրողն ՚ի գործելոյն զա
նազանի յինքեան. որպէս հատանելն ՚ի
հատանողէն ածի յայն որ հատանի.
և հատեալն ընդունելով զհատումն
զանազանի յինքեան. Իսկ անածելէ
յորմէ ոչ ինչ ածի ՚ի կրող ինչ. և ոչ
 զանազանի կրող իմն յինքեան յառ

նելոյն յայնմանէ • որպ՟ 'ի տեսանելոյն
ոչ ինչ կրէ տեսեալն • և ոչ զանազա
նի յինքեան 'ի տեսանելոյն •

Եւ կրկին է ածելն • պարզ և բաղադրեալ •
Պարզ է՝ զի յառնելն՝ 'ի մէջ արարո
ղին և արարելոյն ոչ ինչ է • որպ՟ ստեղ
ծանելն և ծնանելն • զի՝ ստեղծօղն
առանց գործեաց ստեղծանէ • և ծը
նօղն առանց գործեաց ծնանի •

Իսկ բաղադրեալն հանդերձ գործեօք
երեւի • զի սղոցելն և զգեցուցանելն
առանց միջնորդի ոչ են • քանզի 'ի մէջ
սղոցողին և սղոցելոյն՝ գոյ սղոցն • և 'ի
մէջ զգեցուցանողին և զգեցելոյն՝ է զգեստն •

Նմանապ՟ և անածելն է կրկին • եզակի
և կրկնակի • Եզակին է, զի երեւի առ
նելն • բայց արարողն և արարեալն ոչ
զանազանին • որպ՟ ելանել և գնալ • վ՟
զի ելանելն և գնալն են առնել • և
նոյն է ելօղն և ելեալն • գնացօղն և
գնացլն • Իսկ կրկնակին է, զի յառնելն՝
զանազանին արարողն և արարեալն •
որպ՟ ասել և իմանալ • քանզի յասելն՝
այլ է ասացողն, և այլ ասացլն • նոյնպ՟
59 այլ է իմացօղն, և այլ իմացեալն •

Ա՛ արդ՝ իմացօղ և զգացօղ՝ են որկք·
քանզի իմացօղն յիմացողութէն որո
կացեալ՝ յորջորջի իմացօղ· և զգացօղն
'ի զգացողութէն· բայց իմանալն և զգա
ցելն ոչ են ընդ որակաւն· զի տեսանելն
և իմանալն ներգործել են· քանզի տա
սունք սկզբունքն ըստ լինելութեան՝
միմեանց պատճառք լինին· որպէս յառնե
լոյ և 'ի կրելոյ՝ որակն լինի· զի 'ի ջեռու
ցանելոյն և 'ի ջեռնլոյն՝ ջերմութիւն
և ջերմն լինին· և 'ի հաստանելոյն հա
տանօղն լինի· զի թէպէտ հաստանելն
'ի հաստանողէն է, սակայն հաստանօղն
'ի հաստանելոյն յորջորջի հաստանօղ·
Նմանապէս և յորակաց առնելն և կրելն
լինին· զի 'ի ջերմութէ ջեռուցանելն
և ջեռնուլն լինի· վասն զկնի որակին
առնելն և կրելն գասին· այսպէս և
այլ սկզբունքն 'ի միմեանց լինին·
Բայց ըստ ստորոգման ոչ լինին միմեանց
ըսկիզբն· զի ոչ կարեն գոլ միմեանց
սեռ· քանզի թէ մինն զմիւսմէն ստո
րոգիւր, այն՝ զորմէ ստորոգիւր ստո
րոգութի իմն՝ ոչ կարէր գոլ սկիզբն
 և ստորոգութի· ուստի թէպէտ

իմանալն՝ ըստ լինելութեան է յիմացողէն առ իմացելին, սակայն իմանալն է առնել. այլ իմացօղն և իմացեալն ո՛չ են առնել. այլ են որակք: Նաև առ ինչ ևս են. զի իմացելն իմացմամբն է իմացեալ. և իմացումն՝ իմացելոյն է իմացումն. բայց նախկինապէս՝ են որակք: Որպէս մակացութիւն և մակացելին են որակութիւն և որակ. այլ վասն հոլովմամբ հակադարձութեան և առ միմեանս վերաբերութեանն են առ ինչ:

Նւ՞ ա՛րդ՝ են ձայնք՝ որք պարզապէս նշանակեն զառնելն. որպէս լինել և ընկել. Նւ՞ են ձայնք՝ որք պարզաբար ո՛չ կարեն նշանակել զառնելն. որպէս գերութիւն և սպանութիւն. քանզի գերութիւն նշանակէ զունակութիւն գերւոյն. զի գերին գերութեամբն է գերի. և ըստ այսմ գերութիւնն է որակութիւն և առ ինչ. բայց գերութիւն կարէ նշանակել և զգործ գերողին. որ է գերելն. և ըստ այսմ է առնել. Նմանապէս և սպանութիւն նշանակէ զունակութիւն սպանելոյն. որ որում է որակութիւն և առ ինչ. այլ և նշանակէ զսպանումն. իսկ սպանանելն է առնել:

Նաեւ տես, զի սպանութիւն որ ՚ի սպանո-
ղէն առ սպանանելին լինի՝ որ է սպա-
նանելն, է ՚ի շարժման. իսկ սպանու-
թիւն որ ՚ի սպանանելն երեւի, ոչ է ՚ի շարժ-
ման. այլ է ունակութիւն իմն ՚ի սպանանելն.

Յաղագս Ձեւականաց Որակման.

Նախ, զի զյաճախն և զնրբագոյն ըն-
դունի՛. քանզի ջեռուցանել՝ առաւել
և նուազ լինի։ Երկրորդ, զի ներհակու-
թիւն ընդունի. վասն զի ջեռուցա-
նելն՝ ցրտացուցանելոյն ներհակ է.
Երրորդ, զի ՚ի շարժմանն է. քանզի հա-
տանել՝ առանց շարժման ոչ լինի.
Կրելն եւս է ՚ի շարժման. Այլ իմ
առնել ոչ է ՚ի շարժման. զի իմանալն
ոչ է ՚ի շարժման. զի իմանալն է իմա-
ցականին. իսկ իմացական զօրութիւն
ոչ է շարժական զօրութիւն հոգւոյն. և այ-
սոքիկ յայտ են ՚ի տեսութենէ անձին.
Չորրորդ, զի միանգամ և բազում անգամ
ըստ առնելոյն ասի. քանզի խօսել մի
անգամ և երկու անգամ ասի։
Նայց կրելն եւս ասի միանգամ և եր-
կիցս. զի ջեռնուլ մի անգամ և բազում
անգամ ասի։ այլ քանզի կրելն

համանգամայն ընդ առնելոյն լինի ·
ուստի որինչ հեռաւի առնելոյն՝ հեռա
նի և կրելոյն · վասն որոյ առնելոյն
դժնարան որոշի 'ի հեռաւմանց կրելոյն
Բայց կարելի՛ է զանազանել զուրոյն
առնելոյն այսու յաւելածովն · ոչ ըն
կալմամբ · զի որ 'ի շարժմանն է և ոչ է
ընդունակութեան՝ ներգործե՛լ է ·
Եւ նմանապէս յորոյ վերայ ասի մի
անգամ և երկիցս և ոչ է ընկալմամբ՝
առնե՛լ է · զի կրելն ընկալմամբ է ։
Եւ թէպէտ առնելն երևի ընկալեալ
'ի կրողէն, այլ ընդունակութին այն
ասի կրել և ո՛չ առնել · զի ներգործելն
'ի կողմանէ արարողին առեալ լինի ։

Յաղագս Կրման ։

Կրելն ոմն է ըստ գոյացութեն և ոմն
ըստ պատահման ։ Ըստ գոյացութեն կր
րել է՝ որպ ծնանիլ ։ Իսկ ըստ պատահ
մանէ՝ ոպ ուրախանալ ։ Ըստ գոյացութե
կրելն որոշի 'ի լինելն և յապականելն ·
Լինիւ, որպ ստեղծանիլ · ծնանիլ · շինիլ ։
Իսկ ապականիւ, որպ մեռանիլ · այրիլ · հատանիլ ։
Եւ ըստ պատահման կրելն անջատի
63 'ի ներքսակրելն և յարտակրելն ·

4 Սերմնաւորել, որպէս ուրախանալ. Տիրան
գանալ. Ջեռնուլ. Իսկ արփաւորել, որպէս
մկրտիլ. զգեցուցանիլ. գանիլ.
Այլ թերեւս ասիցէ ոք, որգանի՛ ձու-
նի յինքն զցաւս, զմէ՞ է գանիլն արտա
կրել. Պտելն է թէ, գանիլն որէ ար
տաքոյ՝ է արտակրել. իսկ ցաւիլն է
ներքսակրել. Այլ ո՛րդ՝ իսկպէս տեսակք
են կրման չորքս այսոքիկ. լինիլ, ապա
կանիլ. ներքսակրել, և արտակրել:
Բայց արտաքոյ այսոցիկ երեւին ոմանք
կրել. ո՛րգոն, ասիլ. անսանիլ. իմանիլ.
քանզի այսոքիկ ոչ են լինիլ և այլն.
Օ ի որ կազմի՝ ընդունելով զառնելն
յումեքէ, լինի որոշ էրն. և որ ապա
կանի, որ ինչ էրն՝ յառնելոյ իմեքէ յոչ
ինչ փոխարկի. և որ ուրախանայ կամ
գանի, այլայլի. Իսկ որ տեսանի կամ
իմանի, ո՛չ լինի և ո՛չ ապականի. ոչ
այլայլի և ո՛չ փոփոխի. ապա ուրեմն
արտաքո՛յ են 'ի չորից սեռից.
Բայց ընդ կրմամբս դասին. քանզի
ինունց սկզբանց ո՛չ ունեք պատկա
նին, այլ միայն կրման.

Նախ, զի ընդունի զներհակութիւն.
վս զի հեշտանալ և խոժոռիլ ներ
հակ են. և հիւանդանալ և առողջանալ
Երկ̃դ, զի զյաւէտն և զնուազն ը̃ունի.
զի սրբիլ՝ սաստկ̃ագոյն և թուլագոյն լինի.
Երրորդ, զի 'ի շարժման է.
Չորրորդ, զի զբազում անգամ և ըզ
մի անգամ ասելն ընդունի.
Հինգ̃երորդ, զի կրելն 'ի ներգործելոյ
լինի. զի ոչ ոք կրէ առանց արարչի.
Բայց ուրախանալ և տրտմիլ երևին
առանց առնելոյ, այլ ոչ են. ք̃զի արար
չականք սոցա՝ են համբաւք և տեսութիւնք
և ազդմունք վերնադունիցն.
Իսկ թէպէտ կրել առանց ներգործելոյ
ոչ լինի, բայց առնել առանց կրելոյ լի
նի. քանզի բազմիլ որէ առնել՝ առանց
կրելոյ է. զի բազմօղն է՝ արարող՝ և
բազմիլն է առնել. իսկ կրել ոչ երևի.
Բայց բազմեցուցանիլն որէ կրել՝ առանց
բազմեցուցանելոյ ոչ լինի որէ առնել.
քանզի բազմիլ և բազմեցուցանել՝ են
առնել. որոց մինն ոչ է արարչական
65 կրման. իսկ 'իմիւսոյն լինի՝ կրել.

## Յաղագս Ուրի.

Ուրէ՝ որով տեղաւորն երևի գոլ 'ի տեղւոջ. որ գոն, աստ.

Զի՞ ուրն ո՛չէ տեղի. զի տեղին ո՛չ ցուցանէ զտեղակալ ինչ գոլ ընդ տեղեաւ. քանզի երկին և երկիր, քաղաք և տուն, են նշանակիչք տեղւոյ. և ո՛չ նշանակեն զտեղակալն գոլ առ տեղեաւ.

Զի՞ թէ ասիցի՝ թէ երկին և քաղաք և այլք այսպիսիք նշանակիչք են գոյացութեանց և ոչ են տեղիք.

Ասելի է թէ՝ մարմնական գոյացութիւնք համդերձ տեղական նշանակութեամբ են. ուստի յասելն՝ իշխան, և ճանապարհ, իսկոյն նշանակել լինին տեղիք. բայց ո՛չ ասացեալ առանց տեղակալի՝ նշանակելիքեն

Իսկ յասելն՝ ընդ երկնիւք, 'ի տան, առ գետովն, ո՛չ նշանակի տեղի կամ տեղակալ. այլ նշանակի տեղակալ իմն գոլ 'ի տեղւոջ. զի այսպիսիքս զտեղին համդերձ տեղակալաւն նշանակեն.

Զի՞ ուրն ո՛չէ տեղին և ոչ տեղակալն

Ուրն որոշի՝ 'ի ներքս և յարտաքս.

Ներքս. որ գոն, 'ի քաղաքի. 'ի տան.

 'ի գետոջ. Արտաքս. ո՛րկէն, առ

քաղաքաց․ զտամբ․ առագեստով․ ընտանիք
Նաեւ որոշի դարձեալ ուրն ՚ի հակակայականն և յանհակակայականն ։
Հակակայական ո՛րդոն, ի վերնում․ ՚ի ներքնում․ ՚ի միջի․ զեզերբ․ ՚ի ներքս․ արտաքս․
Նաեւ անհակակայական․ ո՛րկեն, յերկրի․ ՚ի քաղաքի․ ՚ի տան․

## Յաղագս Ներհականաց Ուրին․

Նախ, զի ո՛չ ընդունի զյաւէտն և զնուազն․ զի ասա գոլն ո՛չ է յաւէտ և նուազ ըստ տեղականն՝ քան զանդ գոլն։ Երկրորդ, զի ո՛չ ունի ներհակութիւն․ վասն զի ասա գոլն ո՛չ է ներհակ անդ գոլոյն․ և թուի թէ ՚ի վերնում գոլն ներհակէ ՚ի ներքոյ գոլոյն, այլ ո՛չ է․ քանզի վերին ըստ ինքեան ո՛չ լինի․ այլ ներքնո՛յն լինի․ զի վերին և ներքին որք են առ ինչ, առ միմեանս համեմատելով բաղկանան․ զոր ո՛չ է գտանել ՚ի ներհականս․ զի ներհականքն զմիմեանս լուծանեն․ ապաու″ ի վերնում, և այլք այսպիսիք որք են ըստ առընչիցն՝ ո՛չեն ներհականք․ և ս, զի ուր յաւէտ և նուազ ո՛չ է, անդ և ո՛չ ներհակութիւն է․
67 Երրորդ, զի ուրն ըստ մարմնոյ ասի․

և Թէպէտ կարէ ասիլ 'ի մարմնի աստ գոլ անձն. այլ այս ոչ է ըստ տեղակալութե. այլ՝ ըստ Թափանցման. զի անձն Թափանցեալ է 'ի բոլոր մարմինն. և այս յայտ է, զի ոչ ինչ տեղի՝ յան մարմնոյ լնանի կամ դատարկի. բայց՝ կալն ևս է ըստ մարմնոյ.

Զ՟, զի ըստ ուրին ասի կալն. և այս յայտ է 'ի հարցմանէ և 'ի պատասխանւոյ որ ուրին լինի. որգոն, ուր կայ, ուր եղմի ուր ընկողմանեալ է. աստ. անդ. ի տան.

### Յաղագս Երբին.

Երբ է, որով Ժամանակաւորն երևի գոլ առ ժամանակն. որգոն, այժմ.

Երբն ոչ է Ժամանակ. վ՟ զի ամանակն չափ է զշարժունս. որգոն, Ժմ. օր. տարի

Իսկ երբն ոչ է քանակ. և ոչ չափ է ըշ շարժունս. քանզի յասելն՝ յայսմ ամի կամ այսօր, ոչ երևի քանակ ինչ. այլ երևի եղել ինչ առ այնու ամանակաւ. Քզի երբն ոչ է ամանակ, և ոչ առ ամանակաւ եղեալն. այլ է ասութիւն իմն որ նշանակէ զառ ամանակաւ գոլն.

Երբն որոշի ըստ կտրլոյ և ըստ անկտրի

 Ըստ հատարելոյ. որգոն, առ գերու

թէն բաբելացւոց. 'ի ժամանակս կոս
տանդեայ. հերու. երէկ. յանցեալ
առաւօտուս. և այլք այսպիսիք ասին
ըստ կատարելոյ. քանզի զորքօք եղելութիւնքն
կատարեալ երևին։ Իսկ ըստ անկատարի.
որպէս, 'ի գալ աւուրս. 'ի վաղիւն. 'ի
միւսում աւուր։ և այսոքիկ ասին ըստ
անկատարի. քանզի առ սոքօք ոչ գոյ
եղելութին կատարեալ։ Բայց ոմանք ըստ
ինքեանց ոչ ըստ կատարելոյ են և ոչ
ըստ անկատարի. որպէս, այժմ. այսօր։
քանզի կարէ ասիլ՝ այժմ եղև, կամ
լինի. որ է ըստ կատարելոյ։ և այժմ լի
նելոց է. որ է ըստ անկատարի։
Ուստի այսպիսիքս հանդերձ յաւել
ածուքն լինին ըստ կատարելոյ և ըստ
անկատարի. որպէս, այսօր ընդ առաւօտս.
այսօր ընդ երեկս։ յայսմ ամի գնաց.
յայսմ ամի գնայ. կամ գնալոց է։

## Յաղագս Ժխտականաց Մակբայից։

Նախ, զի ոչ ընդունի զյաւէտն, և
զնուազն. քանզի այսօր գոլն ոչ է յա
ւէտ կամ նուազ ըստ ժամանակի՝ քան
զերէկ գոլն։ Երկդ, զի ոչ ունի ներ
հակութիւն. քանզի այսօրն յարէլ է

ընդ երեկ. զոր ոչ է գտանել 'ի ներ հակութ. զի ներհակքն ոչ յարին առ միմեանս. այլ լուծանեն զմիմեանս. նաեւ նոյն այսօր' 'ի վաղիւն' լինի երեկ. Իսկ ներհակաց անկար է նոյնն լինել միասն. զի ոչոք առաքինութ լինի վատ թարութիւն. Արդ, համանգամայն, եւ նախկին, եւ վերջին, ըստ երբին ա-սին. քանզի որ 'ի նոյնում ամանակի են' ասին համանգամայն. եւ որք ոչ են 'ի նոյնում ամանակի, ասին նախկին եւ վերջին. եւ որդ, 'ի նոյնում ամանակի' է երբ. նմանպէս յայլ եւ այլ ամանակս է երբ.

## Յաղագս Դրութեան.

Դրութիւն է եղանակ վետեղութեն մարմնական գոյացութ. որպէս, նստիլ. Ա՛ դրութինն է կրկին. զգայկն եւ անզգայ. Զգայականն է կալն զգայ ականաց. որպէս բազմիլ. ընկողմանիլ. որսայսիլ. Առանց զգացմանէ է եղա նակ դրման անզգայնոց. որպէս արձանա ցեալ. կառուցեալ. ըսփռեալ.

Բայց դրել, տարածեալ, եւ այլք այս պիսիք, երբեմն զգայնոց ասին եւ եր 70 բեմն անզգայից. վասն զի անդամք

մարմնոյ՝ դրնելք ոմանք են։ և իւրաքանչիւր անդամք ունին կերպ իմն դրման։

Նաև աշտանակ և քարինք և այլք բազումք ունին դրուլիս։ Նմանապէս և տարածումն ծառոց լինի, և տարածումն ջուրց։ Բայց գիտելի է, զի որք ընդ դրութս են՝ կրկին նշանակութք են. որպէս բաղմին է առնել և կալ. քանզի ըստ այնմ զի ոմն ՚ի յոտն կալոյն սկսանի բաղմիլ որ է ՚ի շարժման՝ է առնել. և ըստ այնմ զի բաղմին նշանակէ զկերպ իմն կալոյ անշարժապէս՝ է կալ. Նմանապէս և տարածումն, ըստ այնմ զի հակադարձի հոլովլիւք ընդ տարածելոյն՝ է առ ինչ. իսկ ըստ այնմ զի է կերպ իմն կացման՝ է կալ. և նոյնինքն դրութին առ ինչ է. քանզի դրութի դրողին է. որպէս՚՚ դրելոյն. և դրեալն դրութեամբն է դրեալ. ապա՚՚ ընկողմանումն և ընկողմանելն՝ և նիստն և նստեալն՝ և այլք այսպիսիք են առ ինչ։ Նա տարակուսելի է թէ որ ընդ այլով ստորոգութբ է, զիա՞րդ ըստ ինքեան կարէ գոլ սկիզբն և սեռականագոյն սեռ։ Ասելի է թէ՝ դրութի 7ւ ըստ ինքեան ոչ է ընդ առընչիւն.

որպէս և մակացութիւն ըստինքեան ոչէ առ
ինչ. այլ՝ որակութի՟. բայց ըստ այնմ զի
վերաբերի առ մակացելին, և հոլովիւք
հակադարձի ընդ նմա, ասի առինչ։
Նմանապէս և դրութիւն ըստ ինքեան է
սկիզբն և սեռականագոյն սեռ. զի է
տեսակ զետեղութե՟ մարմնական գոյա
ցութե՟. որ ոչ գտանի յայլ ստորոգութիւնս.
բայց ըստ այնմ զի վերաբերի առ դը
րեալն և հոլովիւք հակադարձի ընդ նմա՝
ասի առինչ։ Այլ արդ՝ թէպէտ ընկող
մանութի՟, և ընկողմանիլ, և ընկողմա
նեալն, ասին կալ. որպէս ասէ արիստո
տէլ թէ՝ ընկողմանելն է և նստիլ, բայց
ըմբռնումն կալոյն որ'ի սոցանէ լինի՝
մի է։ Ուստի առ'ի յըմբռնել զկալն՝
պարտ է թողուլ զայլ նշանակութիւնս
որ յասուեցս այսցանէ գոն, և ըմբռ
նել միայն զեղանակ զետեղութե՟ մարմ
նականացն. քանզի ընկողմանութիւն
ըստ այնմ զի վերաբերի առ ընկողմա
նօղն՝ է առինչ։ Իսկ ընկողմանօղն որ
նոյն ինքն է ընկողմանելն է գոյացի՟.
ըստ այնմ զի վերաբերի առ ընկող
մանութիւն է առինչ.

Իսկ ընկողմանիլն ըստայնմ զի ընկող-
մանօղն սկսանի ընկողմանիլ որ է 'ի
շարժման՝ է առնել: Այլ՝ ո՛րդ՝ թէպէտ
այսուքիկ զայսոսիկ նշանակեցին, բայց
ըստ ինքեանց ցուցանեն զտեսակ իմն
զեռեղուն զգայնոյ. որպ՛ զկերպ ընկող-
մանման որ անշարժապէս իմացեալ
լինի առ մարմին ընկողմանելոյն:
Նոյնպէս իմանալի է և զայլոց՝ ո՛րգոն,
Գրութիւն. գրումն. գրեալ:
Նիստ. նստիլ. նստեալ: Որսայումն
որսայսիլ. որսայսեալ. և այլք այսպի-
սիք յոլովք գոն. որք իսկապէս և նախ-
կնաբար ցուցանեն զտեսակս զեռե-
ղուն մարմնականաց:

## Յաղագս Հատկութեանց Դրութեան.

Նախ, զի ոչ ընդունի զյաւէտն և
զնուազն. քանզի ոմն ընկողմանումն
ո՛չ է յաւէտ կամ նուազ կալ՝ քան զոմն
ընկողմանումն: Այլ թէ ասիցի թէ՝
ոմն ընկողմանեալ առ հանգստագոյն
ընկողմանեալ քան զոմն ընկողմանօղ:
Ասելի է թէ՝ ոմն ընկողմանեալ լինի
հանգստագոյն քան զոմն՝ ըստ հեշտուն
 շօշափականին. և ոչ ըստ տեսակի

ընկղմանման։ քանզի ոչ լինի ասել
թէ է յոյժ ընկղմանութի՟ն պետրոսի
քան զպօղոսին։ և թէ ասիցի՝ կամ ըստ
ծանրութե՟ն ցա՟ոյն լինի ասացեալ,
կամ ըստ հեշտութեան մարմնոյն։
Ե՟կդ, զի ո՛չ ունի ներհակութի՟. քանզի
ոմն ընկղմանութի՟ն ոչ ներհականայ
ումեմն ընկղմանութե՟ · և ո՛չ նիստն
ընկղմանութե՟։ Ե՟րդ, զի ըստ մարմնո՛յ
է դրութի՟ն։ Չ՟դ, զի ըստ դրութե՟՝ ասի
խախուտ և անխախտ։ Ե՟ թէպէտ՚ի
վ՟ր այլոց ևս կարելի է ասել խախուտ
և անխախտ, այլ ո՛չ իսկապէս· քանզի
վ՟ս քաջագոյն ունելոյ զ՟քինութի՟ն՝
ասի անխախտ յառաքինութի՟ս. և վ՟ս
թուլագոյն ունելոյ՝ ասի խախուտ։
Ա՟յլ խախուտ և անխախտ՝ ո՛չ վասն
քաջագոյն կամ թուլագոյն ունելոյ
ասին · այլ վ՟ս խախուտ և անխախտ
գոլոյն։ քանզի դրութե՟ երկնի և երկ
րի՝ և զետեղման ծովու՝ և այլոց բազ
մաց՝ ասի անխախտ · և ընկղմանու
թեանն պետրոսի ասի խախուտ։
Ա՟պաու՟ խախուտ և անխախտութ՝ իս
 կապէս ըստ դրութե՟ ասին։

## Յաղագս Ունելոյ։

Ունելն ունի Առաջին տեսակ զո
րակականն։ և Որակականն է՝ որով
ունօղն յունելն որականայ․ ո՛րգոն,
ունել առաքինութի․ բոլորակուի․
Հայրութի․ քանզի որ ունի զառաքի
նութին, նոյնա՛ որակացեալ յորջորջի
առաքինի։ և որ ունի զեռանկիւնու
թիւնն, ասի եռանկիւնի։ և որ ունի
զհայրութիւնն, ասի հայր․
Երկրորդ տեսակ է զետեղականն․
և Զետեղական է, որ առ ոք կամ
յումեք զետեղեալ է․ ո՛րկէն, ունել
մատն մատանի․ կօշկաւոր, զինաւոր։
Բայց զետեղականս զանազանաբար
գոյ․ քանզի է որ մասն է՝ 'ի բոլորի ի
րում զետեղնել․ ոպ մատն, կամ ձեռն
կամ այլքն են 'ի մարմնի անդ․
Եւ են որք զարդ կամ զգեստ են․
ոպ մատանին 'ի մատին զգեստաւոր
գոլն։ Եւ են որք յամանոջ են․ ոպ
գինին 'ի կարասի․ և գանձն 'ի քսակի․
քզի այսոքիկ ևս ունել ասին․ զի սա
փորն զգինին ունի և կեղթն զցորենն
Երրորդ տեսակ ունելոյ՝ է ստացկնն

ոմն ունել տունս և ագարակս. գանձս
և ցորեանս։ Բայց ունել ցորեան և
գինի և այլք այսպիսիք, ըստ կրկին
եղանակի ունել ասին. այս՝՝ ըստ զետեղ
ման և ըստ ստացուածոյ։ Ըստ զետեղ
մանն է, շտեմարանն ունել ցորեան։
ըստ ստացուածոյ է, այր ոմն ունել ցորեն
Զդ. տեսակն է ունելոյ հակադարձականն
որդոյն, ունել հայր. ծառայ. կին։
և այսոքիկ ասին հակադարձականք.
Քանզի որդին ունի հայր, և հայրն որդի։
այրն զկինն ունի, և կինն զայրն։
Ծառայն զտէրն ունի, և տէրն զծառայն։
Բայց ծառայն ըստ ստացուածոյ ևս
կարէ գոլ։

### Յաղագս Հետեւմանց Ունելոյ։

Նախ, զի զյաւելուն և զնուազն ըն
դունի. քանզի ոմն յայսմ ամի քաջա
գոյն ունի քան զհերու։ Երկրորդ, զի ու
նի ներհակութիւն. քանզի ունել մակացու
թիւն ներհակ է տգիտութեան ունելոյն։
Երրորդ, զի ունելն որ է սեռականագոյն
սեռ, առ իւրաքանչիւր ունել առա
դրի. որպէս, ունել բոլորակութիւն.
 ունել ծառայ։ Քանզի այսոքիկ

ըստ ինքեան ասացելք, ոչ են ունել.
զի բոլորակութի և առաքինութի որս
կունիք են. և ծառայ և հայր՝ առինչքեն.
անդ՝՝ զունելն առադրելով այսոցիկ,
լինին ունել. որդւոյ, ունել հայր. ու-
նել տուն: Այլ ընդդէմ առարկի.
քանզի կօշկաւորեալ և զգեստաւորիլ
են ունել՝ և ոչ ունին առ ինքեանս
զունելն առադրիլ: Լուծելի է թէ՝ նոյն է
ունել կօշիկ, և կօշկաւորեալ. և թէ
պէտ ունել կօշիկ՝ ըստ ստացուածոյ
և ս նշանակէ, սակայն սեպհականապէս՝ ու-
նել կօշիկ՝ զկօշկաւորեալն նշանակէ.
Զն, զի ըստ ունելոյն ասի լի և թերի.
բախտաւոր և անբախտ:

Յաղագս Ըէ տասանց ընդհանրաց՝ ըստ որ ին
ջնջմբ ծիլելոյն ստորոգին:

Ութ ստորոգութիւքն՝ այս՝՝ գոյա
ցութին, քանակն, որակն, առինչն
առնելն, կրելն, կալն, ունելն, ստորո
գին զտեսակաց իւրեանց. որգոն,
մարդն է գոյացութ. թիւն է քանակ.
երաժշտն է որակ. մեծն է առինչ.
շինելն է առնել. շինիլն է կրել. նըս
տիլն է կալ. կօշկաւորեալն է ունել.

Իսկ ուրն և երբն ըստ կերպի ստորոգութե զընդ ինքեամբ եղելոցն ոչ ըստորոգին. քանզի ոչ լինի ասել թէ՝ աստնէ ուր. կամ այժմնէ երբ։ այլ ասի թէ՝ աստնէ ըստ ուրին. և այժմնէ ըստ երբին։ Կամ թէ ըստ հարցման առ տեսակս իւրեանց գոլով երևին. ո՛րգոն, ե՞րբ, այսօր։ ե՞րբ, յեռանդն. ու՛ր, աստ։ ու՞ր, ՚իկարս։ Բայց ոմանք ոչ են ընդ միոյ ստորոգութ. ո՛պ մակացութին ըստ այնմ զի որակացուցանէ զայն յորում է ինքն՝ է որակութի։ և ըստ այնմ զի վերաբերի առ մակացելին և հոլովիւք հակդրձի ընդ նմա՝ է առինչ։ և ըստ այնմ զի ասի ունել մակացութի՝ է ունել։ Նմանպ ձիաւորեալն՝ է ունել իսկ ըստ զետեղման. բայց ըստ այնմ զի ձիաւորեալն ՚ի ձիաւորութէն որակացեալ տարբերի յոչ ձիաւորելոցն, է որակ։ և թէպէտ ՚ի սակաւ ժամանակս իցէ ձիաւորեալ, սակայն է տարբերութի։ Նաև ըստ այնմ զի ձիաւորեալն վերաբերի առ ձիաւորութին, և հոլովիւք հկդրձի առնա՝


է առինչ։ և այսպ բազումք գոն։

Բայց առ՚ի դիտել թէ այս իրէ՛ ընդ
այսու սեռիւ, կամ ընդ այնու, Նախ
պարտ է տեսանել թէ սեռն այն ստո
րոգի՞ զամենեցունց որք են ընդ տե
սակաւն այնուիկ. քանզի ոչ է ուղղա
կի՝ զչարն դնել սեռ ատելութն. զի
չարն ոչ ստորոգի զամենեցունց որք
են ընդ ատելութեն. վս զի՝ ատել զա
նիրաւութիս և զանիրաւս՝ ոչ է չար.
ահա ատելութն որ ոչ է չար. ապա ու՛՛
չարն ոչ կարէ գոլ սեռ ատելութն.
Դարձեալ, պարտ է տեսանել թէ՚ի զինչ
էութեն ստորոգի՞ թէ ոչ. քանզի եթէ
ոք դիցէ զսպիտակն սեռ ձեան, ոչ է
ուղղակի. զի՚ի հարցանելն թէ զինչ է
ձիւն, ոչ լինի ասել թէ՝ սպիտակ.
Դարձեալ պարտ է տեսանել թէ ենթա
կայն և ստորոգեալն են՚ի միում ստո
րոգութեն թէ ոչ. զի սպիտակն զձիւնէ
թէպէտ ստորոգի, սակայն սպիտակն
և ձիւնն ոչ են՚ի միում ստորոգութեն.
քանզի սպիտակն է՛ որակ. իսկ ձիւնն
գոյացութի. Բայց ձայնք ոմանք ըստ
ձայնին են պարզք՝ և ոչ յայտնեն որո
79 շակի ինչ. որպէս ձայնս այս, նոյգոյ.

Տ. Օ ի՛ի ձայնէս յայսմանէ, հոլով, ոչ
ինչ նշանակի. վ՟ն ոչ է ընդ ստորոգութ՟
իւիք. զի ամ՟ պարզ ձայն որ ընդ ստո
րոգութե՟ է՝ որոշակի նշանակէ զինչ.
Նոյն թէպէտ հոլով՝ ըստ նշանակութ՟
ոչ է ՚ի ստորոգութ՟ իմիք, սակայն ըմ՟
զի է ձայն յօդաւոր՝ է ընդ որակաւն
և ընդ քանակաւն. քանզի ըստայնմ
զի է ենթակայ լսելեաց՝ և տարբերել
յա՟մ ձայնէ, է որակ. և ըստայնմ զի
է չափեալ փաղառութ՟՝ է քանակ.
Քանզի ա՟մ ձայն թո՛ղ զնշանակութ՟ն՝
է քանակ և որակ. որպէս, հոլով ձայնս,
ըստայնմ զի է ենթակայ լսելեաց, և
զանազանեալ յա՟մ ձայնէ, է որակ.
և ըմ՟ զի է երկամանակ վանկ՝ է քանակ.
իսկ ըստ նշանակութ՟ն է գոյացութ՟.
Բայց առ այն զի լինիցի իր իմն առանց
շարամանութ՟, ոչ է բաւական միայն
պարզութ՟ ձայնին, այլ և իմացմանն. վ՟ն
զի ընթանամն ըստ ձայնին է պարզ.
այլ ըստ իմացմանն է շարամանեալ.
զի նոյն է, ընթանամ, ես ընթանամ.
Քանզի առաջին և երկ՟ դէմքն թէ
ըստ ձայնին են շրմանական թէ ոչ,

6 այլ ըստ իմացմանն են շարամանականք։ զի նոյն է, ընթանամ, ընթանաս. ես ընթանամ, դու ընթանաս։

Իսկ երբ դէմն ոչ կացուցանէ որոշակի զընթացօղն. զի յասելն՝ ընթանայ, ոչ յայտնի ընթացօղն։ Նաև ՚ի յըմբռնել զընթանամ ձայնն՝ ոչ է պարտ շարամանութեան քննել թէ՝ ես ընթանամ թէ նա. այլ պարտ է տեսանել թէ զինչ ընթանալն իցէ. որ է առնել։ Նմանապէս ոչ է պարտ քննել թէ ով է բազմեալն. այլ թէ՝ զինչ բազմեալ ձայնն նշանակէ. որ է՝ կալ։ քանզի՝ այս ամենայն բովանդակեալ՝ է ձայն շարամանական։ Այլ նմանապէս ասելն՝ ունիմ իմաստութիւն, ըստ ձայնին և ըստ իմացմանն է շարամանական. վասն որոյ ոչ է ունել. այսինքն ոչ է ընդ ստորոգութեամբ ունելոյն։ Այլ ասել՝ ունել իմաստութիւն, կամ իմաստնացեալ է ունել. զի ոչ է ձայն շարամանական։ Այսպէս և զայլսն է տեսանել։

Յաղ'' Ներածման Տառից Անհրաժեշտ.

Ստորոգութեանց ոմանք ընդունին զյաւելուն և զնուազն և զհակա կայութիւնն, և ոմանք ոչ:
Եւ ոմանք են 'ի շարժման, և ոմանք ոչ
Եւ ըստ ոմանց ասի նախկին և վեր ջին և համանգամայն, և ըստ ոմանց ոչ: Վսն պարտ է գիտել զայսոսիկ:

Յաղ'' Բնէ ընտրոյց ասի յաւելուն նուազն:

Ամենայն ը̃ հանուր ոչ ընդունի զյաւելուն և զնուազն. վս̃ զի ը̃ հանուրքն 'ի նոյնութե̃ են. թէ գոյա ցական և թէ պատահկն. զի իւրաքանչիւր ը̃հանուր՝ է գոյացական տեսակ[ին]. Եւ թէպէտ պատահկան ընդհանուրքն համեմատելով առ սեռ գոյացութ̃՝ ասին պատահմունք, սակայն առ տեսակս և անհատս իւրեանց են գոյացութիք. Եւ այս յայտ է, զի որ 'ի զինչէութե̃ ստորոգի՝ գոյացութի է. իսկ գոյնն զպիտակէն 'ի զինչէութե̃ ստորոգի. այսպ̃ և զայլ ը̃հանուրսն է տեսանել. Նաև անհատք գոյացութե̃ և քանակի և այլոց ոմանց ոչ ընդունին զյաւելուն և զնուազն. զորս յառաջագոյն ասացաք.

Մեծութ անհատից ոմանց պտղինաց ասի յաւէտն եւ նուազն. որգոն, արդարութին պղատոնի յաւէտ է քան զսոկրատայն։

## Յաղագս Հակակայից

Հակակայք են չորք. Առընչական. Ներհակական. Պակասական. Հակասական։ Առընչական հակակայքն են առ միմեանս հոլովելք. որպէս յայտ է յառընչողսն. զի տէր ծառայինն է, եւ ծառայ՝ տեառն. այսպէս եւ այլ հոլովմանց։ Ներհակականք եռակի են. զի գոն ներհակք որք ոչ ունին մէջ. որպէս հիւանդութիւն եւ առողջութիւն ոչինչ է մէջ. քանզի թէ եւ մասնիկ ինչ մարմնոյ ոչ իցէ յառողջութիւն, ոչ ասի առողջ։ Իսկ որք ունին մէջ՝ կրկին են. քանզի ջերմութիւն եւ ցրտութեան մէջ է գաղջն։ Իսկ ջերմութի եւ ցրտութի կրկին են. զի է ջերմութի որ ոչ յեղափոխի. այլ միշտ է ջերմ. որպէս ջերմութիւն հրոյ։ Նմանապէս եւ ցրտութիւն ձեան։ Այլ գոյ ընտանակ այսոցիկ որոց ունի բաց որոշակի զմինն սոցա. այլ որում հանդիպի զոյն ընդունի. որպէս ջուր երբեմն ջերմ է, երբեմն ցուրտ, եւ երբեմն գաղջ։

Պակասականն է 'ի բնաւորեալսն․ զի տեսողութիւն ունակութիւն գոլով՝ բնաւորեալ է յաչս․ և յորժամ ոչ գուցէ պակասութիւն է․ Նաև այսպիսիքս պակասական և ունակական հակակայք ասին․ որպէս, կուրութիւն, և տեսողութիւն․ կոյր և տեսօղ․

Նաև յորում ոչ է բնաւորեալ գոլ երբեք՝ անդ ոչ ասի պակասութիւն․ զի ոչ ոք զատունկսն կոչէ կոյրս․

Հակասական հակակայ, որպէս, Սոկրատս հիւանդ է, Սոկրատս ոչ է հիւանդ․

Նաև հակակայքս զանազանին 'ի միմեանց․ զի առընչականքն առ միմեանս ասին հոլովիւք․ իսկ այլքն ոչ․ քանզի անկարէ ներհակացն՝ միմեանց ասիլ․ զի չար՝ ոչ ասի բարւոյ չար․ և ոչ երբէք չարի՝ բարի․ Նաև ոչ պակասականքն ասին միմեանց․ զի ոչ է տեսողութիւն կուրութեան տեսողութիւն․ և ոչ վարսաւորութիւն՝ կնտութեան․

Իսկ հակասականքն յայտ է զի ոչ ասին միմեանց․ քանզի այս, Սոկրատէս նստի՝ ոչ ինչ կերպիւ ասի այնմ թէ՝ Սոկրատս ոչ նստի․ Նմանապէս և ներհականն տարբերի՝ 'ի պակասականէն և 'ի

հակասականէն ․ զի ներհակացն որոց
ոչ է մէջ՝ առ միմեանս փոփոխումն լինի ․
Քզի 'ի հիւանդութէ յառողջութի յեղափո
խի ․ և յառողջութէ՛ 'ի հիւանդութի ․
Իսկ 'ի պակասականումն՝ յունակու
թենէ 'ի պակասութիւն լինի ․ զի ա
տամնաւորն՝ ժոռատ լինի ․ իսկ ժո
ռատն ոչ ևս լինի ատամնաւոր ․
Իսկ ընդունակք մէջ ունող ներհա
կացն՝ ոչ 'ի հարկէ զմինն ներհակաց
ընդունին, այլ և ըզ մէջսն ․
Իսկ ընդունակք ունակութեան և պակսութեան՝
'ի հարկէ՛ զմինն ընդունին ․ զի ոչ գոյ
ունակութեան և պակասութեան մէջ ․
Նաև ոչ 'ի հարկէ զմինն ունին որպէս հը
րոյ ջերմութիւն ․ այլ որում և հանդիպի
ընդունակին՝ զոյն ընդունի ․ թէ ու
նակութեան՝ թէ պակասութեան ․ զի 'ի հարկէ
զմինն կարէ ունել և ոչ այլ ինչ ․
բայց ոչ բացորոշակի զմինն ․ այլ որպէս
ասացաւ որում և հանդիպի ․
Եւ 'ի հակասականէն զանազանի ․ Քզի
իւրք հակասութեան միշտ մինն ճշմարիտ է
և մինն սուտ ․ իսկ իւրք ներհակացն ոչ ․
85 որկէն, սոկրատէս առողջէ, սկրս

ոչ է առողջ։ Նա՛ թէ սոկրատէս կեն
դանի է թէ մեռեալ, ՚ի հարկէ սոցա
մինն ճշմարիտ է և միւսն սուտ։
Իսկ յասելն՝ սկտս հիւանդ է. սկտս
առողջ է. թէ սոկրատէս կենդանի է,
մինն ճշմարիտ է և մինն սուտ. և թէ
մեռեալ է, երկոքեանն սուտք են։
Բայց տես, զի ասել՝ սկտս հիւանդ է,
սկտս առողջ է, շարամանականք են.
իսկ ներհակութի ոչ լինի ՚ի շրմանութե.
որպէս, հիւանդութի. առողջութի. առա
քինութի. վատթարութի. որք են անշա
րամանք. այլ մեք շրմանելով ասացաք
թէ իւր ներհակացն ոչ ՚ի հարկէ միշտ
մինն ճշմարիտ լինի և միւսն սուտ.
զի մի՛ ոք զմտաւ ածիցէ թէ գուցէ շա
րամանելով ասացեալ ներհակքն միշտ
զմինն ճշմարտեն և զմինն ստեն.
Նմանապ և պակսկանն ՚ի հակսկանէն
տարբերի. զի իւր հակասութե միշտ
մինն ճշմարիտ է և միւսն սուտ. այլ
իւր ունակութե և պկսութե ոչ. քանզի
ունօղք ունակութե և պակասութե թէ
կենդանի են, ոչ ունին բացորոշակի
 զմինն, զի իւր պատանեկի ոչ լինի

ասել մարմնաւոր կամ կուռնուտ. և թէ մե
ռնելը ենթակայն, բոլորովին սուտ է. զի
իւր մեռանելոյ ոչ լինի անտեսողն կոյր։

Յաղագս Շարժման։

Շարժումն տեսակք են զ. լինելու
թիւն. ապականութիւն. աճելութիւն.
նուազութիւն. ըստ տեղւոյ փոփոխումն.
այլայլութիւն։ Լինի հակակայ լինելութեան
ապականութիւն. աճման՝ նուազութիւն. ըստ
տեղւոյ փոփոխման՝ տեղական դադա
րումն. կամ ըստ տեղւոյ ներհակ շար
ժումն. քանզի ՚ի վերուստ ի վայր շար
ժումն՝ ներհակ երևի ի ներքուստ ՚ի
վեր շարժմանն։ Իսկ այլայլութեան
իմիք ներհականայ այլ իմն այլայլութի.
քանզի գալուստ ջերմութեն ներհա
կանայ դադարման ցրտութեան։

Յաղագս Նախկնութեան։

Նախկին ըստ ե եղանակի ասի.
ըստ ժամանակի. ըստ բնութեն.
ըստ դասու. ըստ պատուոյ. ըստ պատճառի։
Ըստ ժամանակի է՝ զի ոմն ծերագոյն և
վաղագոյն ասի քան զոմն։ Ըստ բնու
թեն է՝ որ ոչ հակադարձի ըստ գոլոյ. զի ՚ի
գոլ մարդոյն՝ ի հարկէ գոյ կենդա

նին. իսկ 'ի գոլ կենդանւոյն՝ ոչ է հարկ գոլ մարդ։ ահա՛ կենդանին նախկին է մարդոյ. Նմանապէս 'ի գոլ երկուց՝ 'ի հարկէ գոյ մին. իսկ 'ի գոլ միոյն՝ ոչ է հարկ գոլ երկուց։ ահա՛ մինն նախկին է երկուց։

Ըստ դասու, զորօրինակ՝ 'ի քերականութեան՝ տառքն նախկինք են քան զշաղադրութիւնս։ Եւ 'ի տրամաբանութեան՝ նախադասութիւնքն նախկինք են քան զեզրակացութիւն։ Եւ 'ի տան՝ դիրք սեանց նախկին եւ վերջին են միմեանց։

Ըստ պատուոյ, զի գիտուն տրամաբանութեան՝ ըստ պատուոյ նախկին է քան զգիտուն դարբնութեան։ եւ ոսկի քան զերկաթ.

Ըստ պատճառի, զի գոլն սկզբնոյ՝ է պատճառ բանիս որ ասէ թէ՝ Սոկրատէս գոյ. եւ ոչ հակադարձի. զի ոչ է բանս այս պատճառ գոլոյն Սոկրատայ, այլ գոլն Սոկրատայ է պատճառ բանին ճշմարտութեան։

Իսկ պատճառն ըստ միտս նախկին թուի գոլ պատճառելւոյն, բայց ոչ է. զի անկարէ առանց պատճառելւոյ գոլ կամ անուանիլ պատճառ։

## Յաղ. համանգամայնից։

Համանգամայնք են իսկապէս՝ որոց լինելութիւնքն են 'ի նոյն ժամանակի։

Իսկ ըստ բնութ համանգամայնքն կըր
կին են. մինչ է ըստ հկտրձութ. որկէն,
կրկնապատկին եղեալ՝ կէսն է. և կիսոյ եղեալ՝
կրկնապատիկն է. ծիծաղականին եղեալ՝
մարդն է. և մարդոյ եղեալ՝ ծիծաղականն է
Իսկ միւսն որ չէ ըստ հկտրձութ. որ՚ի
նոյն սեռէ բաժնեալքն են համանգամայնք
բնութ և ոչ հկտրձին. քզի շնչաւորն
և անշունչն ՚ի կէտայնոյն բաժանեալք՝
են համանգամայնք բնութ և ոչ հկտրձին.
զի ոչ է հարկ ՚ի գոլ շնչաւորին գոլ ան
շունչն. կ՚ի գոլ անշնչին՝ գոլ շնչաւորն
Սոյն որդ՝ ամ հետևմունքս առ ինչ
են. քզի յաւէտ և նուազ՝ ըստ ինքեան
ոչ ասին. այլ առ այլս վերաբերութ ասին
Նմանպ և ներհակ՝ ուրումն ասի. քզի
հակակայ՝ ոչ է ըստ ինքեան ասուի այլ՝
առ այլս. Իսկ շարժութին յայտ է զի
շարժնոյն է. զի ծնունդ ծնիցելոյն է.
Նմանապէս և նախկին՝ ումեմն լինի.
Նոյնպ և համանգամայն եղելութն՝ հա
մանգամայն եղելոցն է. և համանգամայն
եղեալքն՝ համնգմյն եղելութն են հմն.

[illegible]

## Յաղագս Շարամանութեան. Որ է՛ Հատոր Նշխարաց։

ՇԱՐԱՄԱՆՈՒԹԻՒՆ է բաղհիւսութիւն պարզ ձայնից, առ 'ի յարտաբերել զներտրամադրեալն։

Քանզի բանին կրկին է տեսակ. Ներտրամադրեալ և Արտաբերեալ։ Զի որ 'ի ներքսէ՛ յիմացման միայն գոլով առ 'ի ներտրամադրեալ։ և որ շարամանութիւն բառից յառաջագայի՝ առ 'ի արտաբերեալ.

Արդ քանզի արտաբերութիւն ձայնիւ լինի. իսկ ձայնն ունի սեռ զհնչումն. ուստի պարտ է սկսանիլ 'ի հնչմանէն.

Հնչումն է օդոյ՝ ընդբախման լսելեաց։

Սա բաժանի հնչումն 'ի ձայն, և յոչ ձայն։

Ձայն է հնչումն ելեալ 'ի բերանոյ շնչաւորոյ։

Ի բանի ասաց՝ հնչումն է՛ սեռ.

Իսկ՝ ելումն 'ի բերանոյ շնչաւորոյ՝ է՛ տարբերութիւն. որ տարբերէ զձայնն 'ի հնչմանէն որ ոչ է ձայն։

Զի հնչումն պանկակի, և շաչիւն կառաց, և որ 'ի ծափս հարկանելոյն

լինի, են հընչմունք և ոչ ձայնք: զի
ձնչման միոյ տեսակին գոյ անուն՝ որ
ասի յոդն: իսկ միւսոյն ոչ գոյ անուն.
այլ անուամբ սեռին և բարձմամբ միւս
տեսակին նշանակի. որպէս, հնչումնոց յոդն:
Եւ ձայնն որոշի՝ ի յօդաւորն, և յան
յօդն: Յօդաւոր է՝ որ ընդ գրով անկա
նի. որգոն, մարդ: Իսկ անյօդ է՝ որոյ
անկանի ընդ գրով. որպէս հաչիւն շան:
Եւ թէպէտ ձայնք անասնոց ոմանց
երևին ընդ գրով անկեալ, բայց ոչ են.
քանզի ոչ կարեն յըստակագոյն ընդ
գրով անկանիլ որպէս ձայն մարդոյ. այլ
ըստ համեմատութեան երևին ընդ գրով
անկեալ: Իսկ յօդաւորն անջատի ՚ի
նշանականն և յաննշանն: Նշանական՝
որպէս մարդ. իսկ աննշան, որպէս եղջերուա
քաղ: քանզի եղջերուաքաղն՝ միայն
ձայն է յօդաւոր. այլ նշանակէ և ոչինչ:
Իսկ նշանական և յօդաւոր ձայնից
ոմանք են անուանք, ոմանք բայք, և
ոմանք բանք. Եւ զի ձայնն յօդաւոր
յայսոսիկ բաժանի. քանզի դերանունն
ըստ անուանն է. և ընդունելութիւն եր
91. բեմն ըստ անուան վարի. և երբեմն

ըստ բայի. Իսկ այլքն ոչ են նշանականք. այլ՝ աննշանականք. Իսկ շարամանութիւն անուան և բայի՝ է՛ բան. Սոյնու" յօդաւոր և նշանական ձայնն կամ անուանէ, կամ բայ, կամ բան.

## Յաղագս Սման.

Անունն է՝ ձայն յօդաւոր, դրեալ, նշանական, թարց ժամանակի. որոյ մասն զատեալ՝ ոչ է նշանական. Ի բանի աստ՝ ձայնն է՝ սեռ. և յօդաւորն՝ տարբերէ՝ յան յօդ. ձայնէ. և դրեալն ասի, զի անուանք ոչ են ըստ բնութ. այլ դրութե. զի թէ ըստ բնութեն էր՝ յամ լեզուս քարն քար կոչիւր. և նշանականն՝ զանազանէ յաննշան ձայնէ, և՛ի հոլովականէ. զի և հոլովեալ անունն ոչ ինչ նշանակէ որոշակի. քանզի յասելն՝ յակոբայ, յակոբաւ, ոչինչ յայտնի. Այլ թարց ժամանակին՝ տարբերէ ՚ի բայէ. Իսկ՝ որոյ մասն զատեալ ոչ ինչ նշանակէ, զանազանէ ՚ի բանէ. Քանզի՝ Ե՝ և նոս՝ որք են մասունք անուանս այսորիկ՝ Ենոս, ոչինչ նշանակեն. Այլ թէպէտ անուանց ոմանց մասունք զատեալք նշանականք են, բայց ոչ

որպ՟ 'ի բոլորում նշանակեն՝ այնպէս
և զատեալք նշանակեն. քանզի՝ դե
ղեցկաձին նշանակէ զոմն մարդ. իսկ՝
զատեալ ձին՝ նշանակէ զխորնջականն.
Նոյն մասունք բանին՝ որպ՟ 'ի բոլորում
նշանակեն, նոյնպ՟ և զատեալք նշանա
կեն. Զի յասելն՝ սպիտակ մարդ,
թէ շարամանեալք և թէ զատեալք,
մարդն զծիծաղականն նշանակէ, և
սպիտակն զսպիտակ գոյն. Բայց զա
սելն պճոյգ, արիստոտէլ կոչէ անորո
շակի անուն. զի զմարդն ը̄նայ յենթա
կայէ իմքէ. և ո՛չ ցուցանէ զոմն որոշակի

## Յաղագս Բայի.

Բայ է՝ ձայն յօդաւոր, գրական, նը
շանական, ժամանակաւոր. որոյ
մասն զատեալ ոչինչ նշանակէ.

Բան բայիս ըստ բանի անուանն է.
բաց յայնմանէ, զի սա ժամանակաւորէ.
իսկ նա՛ թարց ժամանակի.

Ասէ՛ տես՝ զի բայ դիմաւոր առ ուղղա
կան անուանն գոլով՝ նշանակէ զճշմա
րիտն և զսուտն. որզան, դաւիթ է՛.
դաւիթ ո՛չ է. Իսկ առ հոլովականն
93 գոլով՝ ո՛չ յայտնէ զճշմարիտն և

զուտն. որբար, գաւթիէ. գաւթի
ոչէ. քանզի թէ զինչէ գաւթի՝ ոչէ
յայտ. Բայց՝ յորժամ աներևոյթ բայ՝
առ հոլովական անուան առադրի, յայն
ժամ աներևոյթ բայն լինի իբրև ա-
նուն, և դիմաւոր բայն դոլով առ ա-
ներևոյթ բայն՝ յայտնէ զճշմարիտն և
զուտն. որդան, դաւթի մեռանիլ
հասանի. դաւթի մեռանիլ ոչ հնի

## Յաղագս Բանի.

Բան է՝ ձայն յօդաւոր, դրական, նշանական. որոյ մասունքն զա-
տեալք՝ են նշանականք. Այս տարբերի՝
բանն յանուանէ և ՚ի բայէ այնու, զի
մասունք բանի զատեալք՝ նշանականք
են. իսկ անուան և բայի մասունքն ոչ.
Այս զի՝ ՚ի բանի աստ ոչ եղաւ ամանա
կաւոր՝ կամ առանց ամանակի. քանզի
բանն պարունակէ զկատարեալ և զան
կատար բանս. Կատարեալ բան ամա
նակաւոր՝ որդոն, սոկրատս սպիտակէ.
Իսկ անկատրն Թարց ամանակի և ս լինի՝
որպակ, ստեփաննոս՝ այր լի՝ շնորհօք.
Իսկ ամանակաւոր անկատար՝ որկէն,
 և տեսեալ յի զժողովուրդն.

Իսկ բանից ոմն է Բացերևական․ որ-գոն, հոգի է ա՟ծ․ և ոմն է Հրամայա-կան․ որպէս, սիրեսցես զտ՟ր ա՟ծ քո․ և ոմն է Աղձական․ հիբար, երանի՛ թէ յաջողեալ էին ինձ ճանապարհք իմ․ և ոմն է Ստորադասական․ որպէս, թէ արդարև զարդարութիւն խօսէիք․ և ոմն է Աներևոյթ․ որգոն, կուսի ծնանիլ ա՟ծ և մարդ․ կամ այս, զայն լուեալ պետրոսի․ և ոմն է Հարցա-կան, որպէս, ադամ ո՞ւր ես․

Իսկ արդ թողեալ զայլսն՝ առցուք միայն զբացերևականն․ զի այլովքն ոչ լինի տրամաբանութի՟․ զի այլքն ամենեքեան անհաստատք են և անկատարք․

## Յաղագս Բացերևութեան․

Բացերևութի՟ է բան ապացուցող զիր իմն զումեքէ, ստորասական կամ բացասական․ նշանակող ճշմարտութե՟ կամ ստութե՟․ Բանզի՛ բացերևութի՟ն ստորոգութի՟ իմն զէնթակայէ իմեքէ՝ բացերևոցէ ստորասելով կամ ապու-սելով․ որպէս՝ սկ՟տս ընթանայ․ սկ՟տս ոչ ընթանայ․ Աւ հա՛ զընթանայն ըղ-
95 սկ՟րտյ բացերևոցեաց ստորասելով

6 և բանց ասելով. Իսկ ասելն նշանակող
ճշմարտութեան կամ ստութեան, որոշէ զբացերև
ութին յայլ տեսակաց բանին. քանզի
ասելն՝ սիրեմ զիս, ոչինչ ճշմարտութի
կամ ստութի յայտնէ. նմանապէս և այլ
տեսակք բանին ոչ յայտնեն զճշմա
րիտն և զսուտն. Այլ ա՛րդ՝ բացերևու
թին, նախադասութի, և առաջարկութի,
մին. քանզի ըստայնմ զի բացերևոցէ
իր իմն զիմեքէ, ասի բացերևութի. և
ըստայնմ զի ՚ի հաւաքաբանութեն նա
խադասի եզրակացութեն, ասի նախա
դասութի. և ըստայնմ զի առաջի տր
ամաբանից արկանի առ՚ի քննել, ասի
առաջարկութի. Այլ տրամաբանից
առաջարկութի տրոհեալ լինի այսպէս. հո
դի անմահ է թէ ոչ: Այլ ահա յայտ է,
զի ասելն՝ հոգի՝ որէ պարզ ձայն, առանց
շարամանութեն ոչ յայտնէ զճշմարիտն
և զսուտն. քանզի ՚ի շարամանութեն
յայտնին ճշմարտութին և ստութին.
Ոք թէպէտ մերթ, նշանակէ տեսակ
իմն, այլ չև ևս է յայտ թէ է՞՝ թէ չէ.
զի և եղջերուաքաղն երևի թէ նշա
96 նակէ իր իմն, բայց չև ևս է յայտ.

7 Որպէս յորժամ գոյն կամ ոչ գոյն առ-
դնիցի, յայնժամ երեւի թէ՛ գոյ թէ ոչ
գոյ․ որգոն, եղջերուաքաղ գո՛յ․ եղ-
ջերուաքաղ ո՛չ գոյ․ Մարդ է․ մարդ
ո՛չ է․ Այլ այսոքիկ յայտնի են՝ ի սահ-
մանաց ճշմարտութեան եւ ստութեան․ զի՛
ճշմարտութի՛ է՝ յորում երեւի էն է, եւ
ոչէն ո՛չ է․ իսկ Ստութի՛ է՝ յորում
երեւի էն ո՛չ է, եւ ոչէն է․ Ահա՛ ճշմար-
տութին եւ ստութին՝ էիցն եւ ոչ էիցն
սահմանեցին․ իսկ պարզ ձայնն առանց
էի եւ ոչէի է․ Որպէս" ճշմարտութին եւ
ստութին խնդրոյ ի շարամանութեան երեւին․

## Յաղ" Բաժանման Նախադասութեանց։

Նախադասութեանց ոմն է ստորոգա-
կան, եւ ոմն ստորադրական․

Ստորոգական է, յորում է մի ենթակայ
եւ մի ստորոգեալ․ որգոն, արեգակն
ծագեալ է․ Ահա՛ աստ՝ արեգակն է՝
ենթակայ, եւ ծագեալն ստորոգեալ։
Այս կոչի Ստորոգական․ ի ստորո-
գութեն զանունն ընդունելով եւ ո՛չ
յենթակայէն․ զի ստորոգութին վե՛ր
նագոյն է ենթակայէն․ քանզի ենթա
97 կա՛յն՝ զորմէ ասի իբր իմն․ եւ ստորո

դեալ է որ զայլմէ ասի․ զի ենթակայն՝
է իբրև նիւթ․ իսկ ստորոգելին է իբրև
տեսակ․ իսկ Ստորադրականն է՝ յորում է
Բ ստորոգական նախադասութիւն․ որոց մին,
եթէ արեգակն ծագեալ է՝ տիւ է․
Նման ասէ երկու ստորոգական նա
խադասութիւնս․ մին՝ արեգակն ծագեալ է․
և միւսն՝ տիւ է․ Նաև այս կոչի Ստորա
դրական նախադասութիւն․ զի մին ստորոգական
նախադասութիւն՝ միւսոյն ստորադրեալ է․
քանզի՝ արեգակն ծագեալ է՝ ստորա
դրի այնմ որ ասէ թէ՝ տիւ է․
Արդ՝ տեսցուք նախ զՍտորոգական
նախադասութիւնն, և ապա զՍտորադրականն․
Նաև արդ՝ բաժանեալ նախադասութիւն
՚ի ստորոգականն և ՚ի ստորադրականն,
դարձեալ բաժանի ՚ի ստորասականն
և ՚ի բացասականն․ Ստորասութիւն է՝
բացերևումն իրի իմիք զումեքէ՝ դրա
կան․ որգոն, սոկրատէս արդար է․
Նման ՚ի ստորասութեանս՝ արդարն որ է
իր իմն զումեքէ՝ այս՝՝ զսոկրատայ՝ ապացու
ցանէ դնելով․ Իսկ Բացասութիւն է բաց
երևումն իրի իմիք զումեքէ բարձկն․
98 որգոն, սոկրատէս ոչ է արդար․

Ահա՛ աստ արդարն զսկիզբն ապացու-
ցած բարձմամբ ։ Եւ դարձեալ բաժնի
ՙՆախադասութիւն՝ յընդհանրականն
և ՚ի մասնականն. որգոն, ամ մարդ
արդար է. ոչ ամէն մարդ արդար է։
Ահա՛՝ ամ մարդ արդար է, է ընդ-
հանրական. իսկ՝ ոչ ամէն մարդ ար
դար է, է մասնիկն. քանզի՝ ոչ ամէնն՝
ցուցանէ թէ ոչ՝է ամ մարդ արդար.
այլ գո՛յ մարդ արդար։
Բայց՝ ընդհանրական և մասնական
Նախադասութիւնքս՝ զանազանաբար գոն.
քանզի է՝ զի ստորասութիւն և բացա
սութիւն ընդհանրականք են. որգոն, ամ
մարդ բանական է. ոչ ոք մարդ բանական է.
Ահա աստ ստորասութիւն և բացա
սութիւն են ընդհանրականք. և այս
կոչի ՙՆերհական հակասութիւն.
Եւ է՝ զի ստորասութիւն և բացասութիւն են
մասնականք. իսկ մասնիկնն եռակի է.
Քանզի է՝ որ մասնական նշանաւն լինի. և
Մասնական նշան է, ոմն. որգոն՝ ոմն
մարդ արդա՛ր է. ոմն մարդ ոչ է արդար.
Եւ այս կոչի Ենթաներհական հա
կասութիւն. քանզի ՚ի ներհական հա

կատուէն ելանէ • զի նա ասէ թէ ա՟մ
մարդ արդա՛ր է • իսկ սա ասէ թէ՝ ո՛չ
ամէն մարդ արդար է։ Դարձեալ նա
ասէ թէ՝ ո՛չոք մարդ արդար է • իսկ սա
ասէ թէ՝ ոմն մարդ արդա՛ր է •
Եւ է՝ զի առանց մասնական նշանի
լինի • որպէս, է մարդ արդար • ո՛չ է
մարդ արդար։ Եւ այս կոչի Անորոշ
հակասութի • քանզի ո՛չ է անհատին ան
ուամբն, և ո՛չ մասնական նշանաւն,
և ո՛չ դերանուամբ • զի ցուցանիցէ որո
շակի թէ ո՛յս ոմն է արդար, կամ ոչ ար
դար։ այլ ցուցանէ՝ անորոշակի թէ՝ է
մդ որ արդա՛ր է, և է՛ մդ որ ո՛չ է արդար
Եւ է՝ զի անհատին անուամբն լինի •
որպէս, սկտս արդա՛ր է • սկտս ո՛չ է ար
դար։ կամ դեր անուամբն լինի • որպէս
դու արդար ես • դու ո՛չ ես արդար •
Եւ այս կոչի Նացորոշակի • զի որո
շակի ցուցանէ թէ ո՛ է արդարն, և
ոչ արդարն • Եւ է՝ զի հակասութե
մբնն է ընդ հանրական և միւսն մաս
նական • որպէս, ա՟մ մարդ արդա՛ր է • ո՛չ
ամէն մարդ արդար է։ Ո՛չոք մարդ ար
100 դար է • ոմն մարդ արդար է •

Այլ այս կոչի հակադրական հակասութիւն. քանզի կրկին կերպիւ հակակայի. զի մինն է ընդհանրական, և միւսն մասնական. մինն է ստորասական, և մինն բացասական. Իսկ այլքն միով կերպիւ միայն հակակային. զի ներհակաց թէպէտ մինն է ստորասական և մինն բացասական, սակայն երկոքեանն են ընդհանրականք. Նմանապէս և մասնականաց թէպէտ մինն լինի ստորասական և մինն բացասական, սակայն երկոքեանն են մասնականք. այլ և հակասական հակասութիւն է որ ըստ երկուցն հակակայի. Այլ են այսորիկ ասին հակասութիւնք. Ներհական. Ենթաներհակն. Հակասական. Անորոշակի. Բացորոշակի. Բայց իսկ երեք են հակասութիւնք. զի կամ երկոքեանն են ընդհանրականք. որքեն ներհականքն. Այլ կամ երկոքեանն են մասնականք. որք են ենթաներհակքն անորոշակին և բացորոշակին. Այլ կամ մինն է ընդհանրական և միւսն մասնական. որ է հակասականն. Այլ աւելի քան զայսոսիկ ոչ է հակասութիւն. և այս յայտ է

101 'ի նկարեալ ձևոյդ.

| | | |
|---|---|---|
| Ամէն մդ ընթանայ. | Ներհակք որք են ընդհանուրք. | Ոչ ոք մդ ընթանայ. |
| Ստորադասականք, | Հակասականք / Հակասականք | Ստորադասականք, |
| Ոմն մարդ ընթանայ. | Ենթաներհակք որք են մասնաւորք. | Ոմն մարդ ոչ ընթնայ. |

## Զանազանութիւն Բաժանմանց Նախադասութեանց.

Եւ արդ՝ եռակի՛ եղև բաժանումն նախադասութեան. Առաջինն է ըստ գոյացութեն. Երկրորդն ըստ որակին. Երրորդն ըստ քանակին. Քանզի զինչ էն է գոյացական հարցումն. և որպիսի ինչ էն է որակական հրցումն. և որքանն քանակական հցմն. Այլ արդ՝ բաժանումն նախադասութն՝ ի ստորոգականն և ի ստորադրականն՝

102 է ըստ գոյացութե. քանզի ի հար

ցանելն թէ ո՛ր, կամ զի՛նչ նախադա
սութիւն է, այս՝ ստորոգական, կամ ստո
րադրական ։ Եւս բաժանումն նախա
դասութեան 'ի ստորասականն, և 'ի բաց
ասականն, է ըստ որակին ։ քանզի 'ի
հարցանելն թէ՝ որպիսի նախադասութիւն է ։
այս՝ ստորասական, կամ բացասական ։
Եւս բաժանումն նախադասութեան յընդհան
րականն և 'ի մասնականն՝ է ըստ քա
նակին ։ քանզի յորժամ ասի թէ՝ նա
խադասութիւնս այս է ընդհանրական,
կամ մասնական, է ըստ քանակին ։

Եւ դարձեալ, նախադասութեանց ոմն է
որոշակի՝ և ոմն անորոշակի ։

Որոշակի է՝ յորում ոչ գոյ անորոշա
կի ենթակայ և ստորոգեալ ։ որպէս,
է մարդ ։ ոչ է մարդ ։ է արդար մարդ ։
ոչ է արդար մարդ ։ Իսկ անորոշակի է՝
յորում կամ ենթակայն կամ ստորո
գեալն է անորոշելի անուն ։ կամ եր
կոքեանն են անորոշելի անուանք ։
որպէս, Է՛ ոչ մարդ ։ ոչ է ոչ մարդ ։
Է՛ արդար ոչ մարդ ։ ոչ է արդար ոչ մարդ ։
Է ոչ արդար մարդ ։ ոչ է ոչ արդար մարդ
103 Է՛ ոչ արդար ոչ մարդ ։ ոչ է ոչ

արդար ոչ մ՟դ։ Այլ գիտելի է, զի կեն
դանին՝ որ յորոշակոյն առաւել պա
րունակող է քան զմարդն, յանորոշա
կոյն լինի նուազ պարունակող քան
զմարդն․ քանզի՝ ոչ կենդանին՝ զա՟մ
կենդանիս բառնայ․ և զանկենդանսն
միայն պարունակէ․ Իսկ՝ ոչ մարդն՝
բաց ՚ի մարդոյն՝ զկենդանիս և զան
կենդանս զամենայնն պարունակէ։
Այլ ահա այսպէս՝ որ յորոշակոյն է
առաւել պարունակող․ յանորոշակոյն
լինի նուազ պարունակող․ և որ յորոշա
կոյն է նուազ պարունակող, յանորո
շակոյն լինի առաւել պարունակող։
Այլ դարձեալ՝ նախադասութ՟ց ոմն է
պարզ, և ոմն է բաղադրեալ։
Պարզ է, յորում էութի՟ իւրն միայն
կացուցանի․ որգոն, է մ՟դ․ ո՛չ է մարդ․
է՛ ոչ մարդ․ ո՛չ է ոչ մարդ․
Իսկ բաղադրեալ է, յորում ընդ էու
թեան իւրում բաղադրեալ է․ ո՛րպէս, է
արդար մարդ․ ո՛չ է արդար մարդ․
Այլ այս ասի բաղադրել․ զի արդարն
ընդ մարդոյն բաղադրեալ է։
 Այլ դրձ՟ նախադասութեանց

ոմն է գոյաւոր, և ոմն եղանակաւոր.
Գոյաւորն է՝ յորում գոյն՝ այս՟ բայն
ստորոգի. ո՛րդոն, մարդ է՛. մ՟դ ո՛չ է.
Մարդ արդար է՛. մ՟դ արդար ո՛չ է.
Զի՛ աստ թէպէտ արդարն ևս է ըս
տորոգեալ՝ և ո՛չ միայն գոյն, սակայն
բայն ո՛չ է ենթակայ. այլ ստորոգ՟ել.
վասն որոյ ասի գոյաւոր.
Իսկ եղանակաւո՛ր է, յորում բա՛յն
լինի ենթակայ. ո՛րդոն, մարդոյ գոլն
հարկաւոր է. մարդոյ գոլն ո՛չ է հար
կաւոր: մարդոյ ընթանալն կարելի է.
մարդոյ ընթանալն ոչ է կարելի.
Զի՛ աստ թէպէտ գոյ ևս գո՛յ ստորո
գեալ, սակայն գոլն և ընթանալն որք
են բայք աներևոյթք՝ են ենթակայք.
Իսկ հարկաւորն և կարելին ստորո
գեալք. ուստի ասին եղանակաւորք.
Զի՛ թէ քանի՞ են եղանակք, և
կամ թէ վ՟ է՞ր ասին եղանակաւոր
նախադասութի՟ք, յետո՛յ տեսցուք.

այլ այժմ ասելի է թէ՛ հինգ հա
կասութի՟քն երբ ճշմարտեն
և երբ ստեն.

## Յաղագս ճշմարտելոյ և ստելոյ հակասութեանց.

Որք զընթակայից բացերևացին՝ դ են. Հարկաւոր. Կարելի. Անկարելի. Հարկաւոր է մարդոյ բանական գոլն. Կարելի՛ է սպիտակ գոլն. Անկարելի՛ է էշ գոլն. Արդ՝ ՚ի հարկաւորութեան՝ ներհակին ստորասութիւն ճշմարիտ է. և բացասութիւն սուտ. ո՛րկէն, ամէն մարդ բանակա՛ն է. ո՛չ ոք մարդ բանական է. Այլ յանկարելութեան՝ ստորասութիւն սուտ է, և բացասութիւն ճշմարիտ. ո՛րբար, ամէն մարդ էշ է. ո՛չ ոք մարդ էշ է. Այլ ՚ի կարելութեան՝ երկոքեանն են սուտք. ո՛րպակ, ամէն մդ սպիտա՛կ է. ոչ ոք մարդ սպիտակ է. Ընթաներհակին և անորոշականոյն՝ ՚ի հարկաւորութեան՝ ստորասութիւն ճշմարիտ է, և բացասութիւն սուտ. ո՛րկէն, ոմն մարդ բանական է. ոմն մդ ո՛չէ բանական. է մդ բանական. ո՛չ է մարդ բանական. Այլ յանկարելութեան՝ ստորասութիւնն սուտ է, և բացասացութիւն ճշմարիտ. Հիբար, ոմն մարդ է էշ. ոմն մդ ոչէ էշ. 106 է մարդ էշ. ո՛չ է մարդ էշ.

Իսկ ՚ի կարելումն՝ երկոքեանն են ճշ՛՛.
ո՛րպակ, ոմն մարդ է սպիտակ. ոմն մդ
ոչէ սպիտակ. է մարդ սպիտակ. ոչէ
մարդ սպիտակ: Իսկ հակասականին՝
յամում մինն է ճշ՛՛ և միւսն սուտ.
Ի հարկաւորումն, ո՛րպակ, ամէն մդ
բանականէ. ոչ ամէն մդ բանական է.
Ո՛չ ոք մարդ բանական է. ոմն մարդ
բանական է. ՚Ի կարելումն, հիկէն,
ամէն մարդ սպիտակ է. ոչ ամէն
մարդ սպիտակ է: Ո՛չ ոք մարդ սպի
տակ է. ոմըն մարդ սպիտակ է.
Յանկարելումն, որղան, ամէն մարդ
էշ է. ոչ ամէն մարդ էշ է.
Ո՛չ ոք մարդ է էշ. ոմն մարդ է էշ.
Նմանապ և բացորոշականոյն յամում
մինն ճշմարիտ է և մինն սուտ.
Ի հարկաւորումըն, ո՛րգոն, սոկրատէս
բանական է. սկտս ո՛չ է բանական.
Ի կարելումն, հիզան, սկտս սպտկ է.
սկտս ոչէ սպիտակ. Յանկարելումն.
հիբար, սկտս էշէ. սկտս ո՛չ է էշ.
Նա՛ և արդ՝ յամ հակասութե յամ ժամա
նակի ՚ի հարկաւորումըն և յանկա
107 րելումն մինն ճշմարիտ է և միւսն

սուտ. իսկ ՚ի կարելութն զանազանին.
քանզի ՚Ներհականն ՚ի կարելութն հա
մանգամայն սուտէ. իսկ Ենթաներհա
կանն և անորոշն համանգամայն ճըշ
մարտեն. բայց հակասականին և Բաց
որոշականոյն յամենայնում մինն ճշմարիտ է
և միւսն սուտ, որպէս ասացաւ.
Բայց՝ թէ իցէ իւր նոյն անուան. ջրի
ըստ համանունութեն համանգամայն
ճշմարտեն. որպէս, ամ շուն հաչողա
կան է. ճշմարիտ է վասն երկրային շան.
և ոչ ամէն շուն հաչողական է. և ս
ճշմարիտ է վասն երկնային շան.
Նմանապէս և այս. սոկրատս արդար է. ճըշ
մարիտ է վասն ուրութն սոկրտյ. և սոկրատս
ոչ է արդար. ճշմարիտ է վասն այլոյ ու
րութն սոկրատայ. Նմանապէս և ըստ տե
ղւոյ լինի համանգամայն ճշմարտել.
որպէս, այսօր անձրև է. ճշմարիտ է
վասն տեղւոյս այսորիկ. և այսօր անձ
րև ոչ է, և ս ճշմարիտ է վասն այլ տեղոյ.
Նոյնպէս և ըստ ժամանակի լինի հա
մանգամայն ճշմարտել. որզան, սոկրատս
ալևոր է. ճշմարիտ է վասն ապագային.
և սոկրատս ոչ է ալևոր. և ս ճշմա

րիտ է վս՟ ներկայիս․ Այլ այսէ ըստ զօրութ՟ և ըստ ներգործութ՟․ զի պատանեակն զօրութբ՟ ալևոր է, և ներգործութբ՟ ոչ․ Այլ որքան այսպիսիք գոն՝ որք համանգամայն ճշմարտեն, ոչ են հակասութիք․ քանզի հակասութեց հարկաւոր է մինն ճշմարիտ գոլ և միւսն սուտ․ ուստի որք հմն՟գմյն ճշմարտեն կամ ստեն, ոչ են հկսւթիք․ Վս՟ այսորիկ իսկ՟ հակասութիք են հակասականն և բացորոշակին․ զի յամենայնում ստ՟ թէ մինն ճշմարիտ է, միւսն սուտ է․ և հակադարձեալ․ զի թէ մինն սուտ է՝ միւսն ճշմարիտ է․ իսկ Ներհակին թէ մինն ճշմարիտ է՝ միւսն սուտ է․ և ոչ հկդ՟րձլ․ զի թէ մինն սուտ է՝ ոչ է հարկ միւսոյն ճշ՟ գոլ․ քանզի համանգամայն ստեն․ իսկ Ընթաներհակին և անորոշին թէ մինն սուտ է՝ միւսն ճշմարիտ է․ և ոչ հկդ՟րձեալ․ զի թէ մինն ճշմարիտ է, ոչ է հարկ միւսոյն սուտ գոլ․ զի համանգամայն ճշմարտեն․ Այլ թերևս ասիցէ ոք՝ թէ որք համանգամայն ճշմարտեն կամ ստեն, վս՟ էր ասին

հակասութիւք․ Ասելն է թէ՝ թէպէտ
՚ի կարելութեան համանգամայն սուտն և
ճշմարտն, բայց ոչ և ՚ի հարկաւորութեան
և յանկարելութեան․ այլ․ Ներհականն
յորում համանգամայն սուտ է, անդ ոչ է
հակասութիւն․ այլ ըստ կերպի հակասու
թեան․ այլ յորում մինն ճշմարիտ է և
միւսն սուտ, անդ է իսկ հակասութիւն։
Նմանապէս և Ենթաներհակն և ան
որոշն՝ յորում համանգամայն ճշմար
տեն՝ անդ ոչ են հակասութիւք․ այլ ըստ
կերպի հակասութեան․ այլ յորում մինն
ճշմարտէ և միւսն ստէ, անդ ասին հա
կասութիւք․ Բայց տես, զի ՚ի ստել
մասնականին՝ ստէ և ընդհանրականն․
հիկէն, ոմն մարդ է էշ․ ամէն մարդ է էշ․
Ոմն մարդ ոչ է բանական․ ոչ ոք մարդ է
բանական․ Բայց ոչ հակադարձեալ․
զի ՚ի ստել ընդհանրին՝ ոչ ստէ մաս
նականն․ որբար, ամէն մարդ սպիտակ է․
ոմն մարդ սպիտակ է․ Ոչ ոք մարդ ըս
պիտակ է, ոմն մարդ ոչ է սպիտակ․
Քանզի ՚ի ճշմարտել մասնականին,
ոչ ճշմարտեն ընդհանրականքն․ վասն
 այնորիկ ընդհանրականքն լինին

սուտք, և մասնականքն ճշմարիտք ։
Ա՛ այս յայտ է, զի յորժամ ընդհան
րականքն իցեն ճշմարիտք, հարկէ գոլ
և մասնականացն ճշմարիտք ։

Յաղ՛ Հանգիտութե Նիզութեց ։

Հանգիտութի Նախադասութեց ընի
ը̃ ը̃ հանրութե և ըստ մասնաւորութե
Ընդհանրական նշանք են այսոքիկ ։
ա՛մ ։ ամէն ։ որ ինչ ։ ոչ ինչ ։ ոչոք ։
Իսկ մասնական նշանք են այսոքիկ ։
ոմն ։ ոք ։ իմն ։ մի ։ միուս ։ ոչ ոմն ։ ոմն ոչ ։
Ա՛ ո՛րդ՝ ոչն զոր ինչ զկնի իւր գտա
նէ ապականէ ։ ո՛րդ ոն, ո՛չ ամէն մարդ
ընթանայ ։ քանզի այս, ամէն մարդ ըն
թանայ, է ը̃ հանրական և ստորոնկան ։
այլ ոչն նախադ̃րլով արար զընդհան
րականն մասնական, և զստորասութին
բացասութի ։ Քանզի հանգիտանան
այսք ։ ո՛չ ամէն մարդ ընթանայ ։ ոմն
մարդ ո՛չ ընթանայ ։ Նմանպ՛ հանգի
տանան և այսք ։ ո՛չ ոչոք մարդ ընթա
նայ ։ ոմն մարդ ընթանայ ։ քանզի առա
ջին ոչն զկնի իւր եդիտ ընդհանուր
բացասութի ։ զի՝ ոչ ոք մարդ ընթանայ՝
ııı է ընդհանուր բացասութիւն ։

7 Վսյ ապնեալ զայն՝ արար հանդէտ
մասնաւոր ստորասութ. որ է այս. ամն
մարդ ընթանայ. Հանդիտանան և
այսք. ամ մարդ ոչ ընթանայ. ոչ ոք մդ
ընթանայ. Քանզի ոչն զկնի իւր ոչ
եդիտ զընդհանրական նշանն. վսյ թո
ղեալ զընդհանրութն՝ բառնայ միայն
զստորասութիւնն և առնէ հանդէտ
այսմ, ոչոք մդ ընթանայ. զի նոյն է,
ամ մդ ոչ ընթանայ. ոչոք մդ ընթանայ
Հանդիտան և այսք. ոչոք մդ ոչ ընթնյ.
ամ մդ ընթնյ. քզի առաջին ոչն գտա
նէ զկնի իւր զմասնական նշանն որ է
ոքն. և զբացասութն որ է վերջին ոչն.
և առնէ հանդէտ ընդհանուր ստոր
ասութ. զի՝ մարդ ոք ոչ ընթանայ՝ է
մասնաւոր բացասութ. որում նախա
դրեալ ոչն՝ լինի հանդէտ ընդհանուր
ստորասութեա, ամ մարդ ընթանայ.
Քանզի այս՝ ոչոք մարդ ոչ ընթանայ՝
ցուցանէ թէ ոչոքէ մարդ որ ոչ ըն
թանայ. այս՛՛ ամ մարդ ընթանայ.
Հանդիտանան և այսք. ոչ ամէն մրդ
ոչ ընթանայ. ամն մարդ ընթանայ.
112 Քանզի առաջին ոչն գտանէ ըզ

8. կնի իւր զընդհանրական նշանն և
զվերջին ոչն. և առնէ հանգէտ մաս
նաւոր ստորասութն։ Հանգիտանան և
այսք. ո՛չ ոչ ոք մարդ ոչ ընթանայ.
ոմն մարդ ոչ ընթանայ։ Քանզի ՚ի
նախադասութես այսմիկ, ո՛չ ոք մարդ
ո՛չ ընթանայ, են երկու ոչ. որոց ա-
ռաջինն գտանէ՛ զկնի իւր զոքն, որ է
մասնական նշան. և զվերջին ոչն որ է
բացասական. և առնէ հանգէտ ընդ-
հանուր ստորասութն որ է այս. ամ
մարդ ընթանայ. Իսկ ՚ի նախդասութես
այսմիկ, ո՛չ ոչ ոք մարդ ո՛չ ընթանայ,
են երեք ոչ. որոց առաջինն բառնայ
զամ զորինչ զկնի իւր գտանէ. և զկնի
նր է այս, ոչ ոք մարդ ոչ ընթանայ.
որ է հանգէտ այսմ թէ՝ ամ մարդ ըն-
թանայ. վյ ապականեալ զայս՝ առնէ
հանգէտ մասնաւոր բացասութն. որ է
այս, ոմն մարդ ոչ ընթանայ։ Քանզի՝
ոչ ոչ ոք ոչն՝ է հանգէտ ոմն ոչին.
իսկ ամ ոչն՝ է հանգէտ ոչ ոքին.
Նաև ո՛չ ոչ ոքն՝ է հանգէտ ոմնին.
և ոչ ոք ոչն՝ է հանգէտ ամենայնին։
113 Նաև ոչ մի ոչն՝ է հանգէտ միոյն.

քանզի 'ի բազում տեղիս է բացասութիւն մին ստորասութ լինի · զի ասելն թէ՝ ո՛չ է մարթ չգալ գայթակղութ, է ասել թէ՝ հարկէ գալ գայթակղութ

Նոյնպէս յաղագս հանդիտութ Նախադասութեանց ոմանց՝ հայեաց 'ի նկարեալ ձեւդ ·

| | | |
|---|---|---|
| Ամէն մդ ըն<br>Ո՛չ ոք մդ ոչ<br>ըն · Ոչինչ մդ<br>ո՛չ ընթանայ · | Ներ<br>հակ | Ոչ ոք մդ ըն<br>Ամէն մդ ոչ<br>ըն'' · Ոչ ինչ<br>մդ ընթանայ |
| Ոչ հակասականք, | Հակասականք<br>Հակասականք | Ոչ հակասականք · |
| Ոմն մարդ ըն<br>Ո՛չ ամէն մդ<br>ոչ ըն · Ոչ ոչ<br>ոք մդ ընթա՛ | Ենթ<br>աներ<br>հակ | Ոչ ամէն մդ<br>ըն · Ոմն մդ ոչ<br>ըն · Ոչ ոչ ոք<br>մդ ոչ ընթա |

## Յաղ'' Հակադարձութեան Նախադասութեանց ·

Ըստ Պոա՛ւթի՝ Հակադարձութիւն է՝ 114 փոխադրութիւն երկուց սահմա

նաց, և հաղորդութիւն երկուց նախադա
սութեց մնացելոց 'ի նոյն որակի, համ
գերձ ճշմարտակցելով. 'Ի բանի ասա,
փոխադրութիւն՝ է սեռ. և երկուց սահմանացն՝
է տարբերութի. որ տարբերէ զփոխա
դրութիւն ենթակայի և ստորոգելոյ
յայլ փոխադրութեց. քանզի ենթակայն
և ստորոգեալն ասին սահմանք նախա
դասութե, այս" եզերք նախադասութե.
քանզի նիւթութիւն յայսոսիկ բաժանի
Իսկ հաղորդութիւն երկուց նախադասութեանց
ասի. քանզի բազում անգամ ենթա
կայ և ստորոգեալ փոխադրեալք՝ ոչ
առնեն երկուս նիւթութիւս հաղորդս
միմեանց. որգոն, կենդանի է մարդն.
մարդն է կենդանի. Ահա այսոքիկ
ոչ են երկու նախադասութիւնք զի իցեն
հաղորդք իրերաց. այլ մի և նոյն է.
զի յերկոսեանն մարդն է ենթակայ,
իսկ կենդանին ստորոգելի. քանզի ոչ
ինչ զանազանութի է ասել՝ սոկրատէս
ձեռմի. ձեռմի սկտս. Այլ յորժամ 'ի
փոխադրեալ նախադասութիւն ենթակայն
լինի ստորոգեալ, և ստորոգելին ենթա
կայ, յայնժամ լինին երկու նախա

դասուԹք հաղորդք իրերաց ըստ եր
կուց սահմանաց․ որպէս, ամէն մարդ
կենդանի է․ ոչ ամէն կենդանի մրդ է։
Ահա այսոքիկ են երկու նիւթութք․
ունելով հաղորդութի ըստ երկուց
սահմանաց․ զի մարդն յառաջնումն է
ենթակայ, իսկ յերկրորդումն է ստո
րոգելի․ բայց ոչ են նոյն ըստ որակին․
զի մինն է ստորոգական և միւսն բացական,
վսյ յաւելանի 'ի բանի աստ, ծածկելոյ 'ի
նոյն որակի․ վս զի հկդրձութի ըստ նոյն
որկի պարտ է լինել․ որգոն, ամ մարդ
ծիծաղական է․ ամ ծիծաղականն մրդ է։
Ահա այսոքիկ երկոքեան ստորոգիկքն.
Իսկ՝ հանդերձ ճշմարտապահելովն՝ յաւելանի․
վս զի՝ դիտանաւորու'ի հկդրձութեն՝
է առ 'ի վերաբերութի յայլ հաւաքա
բանութեց առաջին չորս եղանակին,
զոր 'ի հաւաքաբանութն անդ տեսցուք
Իսկ հակադարձութի վս վերաբերութե
եղանակաց՝ ըստ ճշմարտակցելոյն լինի․
քանզի յորում հակադարձութե մինն է
ճշմարիտ և միւսն սուտ, անդ ոչ է իս
կապէս հակադարձութի․ և ոչ լինի
116 նոյնա վերաբերութի եղանակաց․

ոչ ըստ մասնէ բացասականն ոչ ճըշ
մարտակցէ և ոչ ստակցէ. որգոն, ոմն
մարդ ոչէ քերթող. ոմն քերթող
ոչէ մարդ։ Ուստի ոչ ասի այս իսկ
հակադարձութիւն. զի ոչ լինի սոփան
վերաբերութիւն եղանակաց։ Իսկ որք
են ըստ քանի հակադարձութեան՝ են երեք.
Սեպհական, Նոյնական, Տարբերական.
Սեպհականն է ըստ բոլորէ բացասա
կանն. որ հակադարձի առ ինքն.
որգոն, ոչ որ մարդ է քար. ոչ որ քար է
մարդ։ Նաև ըստ բոլորէ բացականն
հակադարձեալ եղև առ ինքն. այս"
առ ըստ բոլորէ բացասականն. զի երկո
քեանն են ըստ բոլորէ բացասական։
Նաև ասի այս սեպուհ հակադարձութիւն. զի
ըստ նոյն քանակի և որակի յաւժամ
անարգել հակադարձի. ոչ թէ սեպհակա
նաբար ունելով զհակադարձութիւն.
Նոյնականն է ըստ մասնէ ստորականն.
որ նոյնպէս հակադարձի առ ինքն.
որպէս, ոմն մարդ է կենդանի. ոմն կեն
դանի է մարդ. Նաև ասի այս նոյնական
հակադարձութիւն. զի ոչ սեպհականն
117 յաւժամ անարգել հակադարձի ըստ նոյն

քանակի և ըստ նոյն որակի, նոյնաբար
և նոյնականս ։ Բայց նա ըստ բոլորէ
բացձկն. իսկ սա ըստ մասնէ ստորճկն.
Տարբերական է ըստ բոլորէ՝ և ըստ
մասնէ ստորասականն. որոց հակադարձի
առնինքն. որպէս, ամ մարդ կենդանի է.
ոմն կենդանի մարդ է. Եւ ասի այս
տարբերական հակադարձումն. զի ոչ հակա
դարձի առնինքն. այլ է զանազան ըստ
քանակին. քանզի մինն է ըստ բոլորէ,
և միւսն ըստ մասնէ ։ զի թէպէտ և
այս յամում անարդել հակադարձի,
այլ ոչ ըստ նոյն քանակութեան. այլ
միայն ըստ նոյն որակութեան.

Եւ առ այսոքիւք տարակուսելի է,
զի ՚ի բանի հակադարձումն ասացաւ,
ճշմարտութեամբն, և ոչ ա՛ր ստակցելով.
Իսկ երեք տեսակք հակադարձութեան
ստակցեն եւս որդոն, ո՛չոք մարդ կեն
դանի է. ո՛չ ոք կենդանի մարդ է.
Ամն մարդ քար է. ոմն քար մարդ է.
Ամ մարդ քար է. ոմն քար մարդ է.
Այսուրեմն տեսակքս այսոքիկ ո՛չ
են ըստ բանի հակադարձութեան.
118 Ասելի է թէ՝ իսկապ հակադարձումն

հարկ է ճշմարտակցելն կամ ստակցելն՝
զի թէ մինն իցէ ճշմարիտ և միւսն
սուտ՝ ոչէ հակադարձութիւն.
Իսկ զի ասացաւ թէ պիտաւորութն
հկդրձւնս է առ՚ի վերաբերութն եղա
նակաց. իսկ անդ ճշմարտակցելն պի
տոյանիս և ոչ ստակցելն. վսյ ՚ի բանի
անդ միայն ճշմարտակցելն ասացաւ.
Դորձլ տարակուսելի է, զի ասացաւ
վս երից տեսակաց հակդրձութն թէ
յամում անարգել հկդձին. այլ երևին
ուրեք թէ ոչ հկդձին ճշմարտկցելով.
Սեպհական հակդրձութն ընդ դէմ
երևի այս. Ո՛չ ոք դդում զդանակն
հատանէ. ոչ ոք դանակ զդդումն հա
տանէ. Լսելի է թէ՝ ոչէ ուղղակի
